Azg
armenian daily
25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1995, ՇԱԲԱԹ # 205 (959)

ԼՂՀ-ն պատրաստ է Ադրբեջանի հետ քննարկել ռազմագերիների հարցը

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐԲ: Այսօր ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունեց ԼՂՀ-ում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի խմբի ներկայացուցիչ Պիեռ Ռայշելին: Ինչպես հայտնեց ԼՂՀ նախագահի մամլո քարտուղար Ալեքսանդր Գրիգորյանը, զրույցի ընթացքում քննարկվել է ռազմագերիների փոխանակման հարցը: Պարոն Ռայշելը գոհունակությամբ նշել է, որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցի ռազմագերիների կենսապայմաններն զգալիորեն բարելավվել են: Դրա հետ մեկտեղ նա ցանկություն հայտնեց, որ դարաբաղյան կողմը մոտ ժամանակներս ազատ արձակի բոլոր ռազմագերիներին եւ առաջին հերթին հիվանդներին:

Իր կողմից նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտնել է, որ ԼՂՀ-ն պատրաստ է թեկուզ այսօր այդ խնդիրը քննարկել Ադրբեջանի հետ եւ դրանով իսկ փակել ռազմագերիների հարցը: Հերթն ադրբեջանական կողմինն է, ընդգծել է նախագահը:

Հանդիպման մասնակիցները նաեւ նշել են այժմ անհետ կորած համարվող անձանց հայտնաբերմանն ուղղված միջոցների ձեռնարկման կարեւորությունը: ■

ՍԱԿ-50

Ս. Դեմիրել-Լ. Տեր-Պետրոսյան հանդիպում Նյու Յորքում

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, Նյու Յորքում Սուլեյման Դեմիրելի հանդիպումներից առավել հետաքրքրականն ու կարեւորագույնը, ինչպես նշում են քաղաքական դիտորդները, Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի եւ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ կայացած հանդիպումներն էին: Այդ հանդիպումներում քննարկվեցին Կովկասի տարածաշրջանում խաղաղության ու կայունության վերականգնման ուղիներն ու հնարավորությունները: Մամլո ասուլիսում Սուլեյման Դեմիրելը ասաց, «Կովկասում խաղաղության վերահաստատումը բխում է ոչ միայն առանձին հանրապետությունների, այլ նաեւ ամբողջ տարածաշրջանի երկրների շահերից: Թուրքիան հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու հարցում միշտ էլ արտահայտել է իր պատրաստակամությունը: Ղարաբաղի խնդիրը եւ Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը հենց սկզբից եղել են Թուրքիայի ուշադրության կենտրոնում: Մենք բազմիցս հայտարարել ենք, որ այդ հիմնահարցը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Այլ լուծում գոյություն չունի:

Սնարի հաղորդմամբ, Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպումից հետո հայտարարել է, թե երկու երկրները հետագա մեր ձեռքման հնարավորություններ ունեն, որոնք հարկավոր է օգտագործել:

Այս կողմից, խնբագրություն հասած տեղեկությունների համաձայն, ՀՀ նախագահը իր այցի 3-րդ օրվա հետմի ջոտեին ճակատույթ է տվել ի պատիվ ազգային մեծ բարեբար եւ արդյունաբերող Ալեք Մանուկյանի: Ճակատույթին ներկա են գտնվել բարեբարի դուստրը՝ ՀԲԸ Միության նախագահ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնը, որդին՝ Մասկո հասատության տնօրեն Ռիչարդ Մանուկյանը, թոռնուհին Քրիստին Մանուկյան Սիմոնը եւ Ա. Մանուկյան մշակութային հիմնադրամի տնօրեն Եվանդ Ազատյանը: Նույն օրը երեկոյան, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ներկա է գտնվել ՄԱԿ-ի 50 ամյակին նվիրված համերգին, «Լինկոլն» կենտրոնի «Ֆիշեր» դահլիճում, որտեղ Նյու Յորքի ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես է եկել Կուրտ Մազուրի ղեկավարությամբ: ■

Քաքկեն Արարքյան. Պատմությունը չի մոռացվում, բայց չի կարելի նրանով քաղաքականություն կառուցել

«Ջումհուրիեթ» թուրքական թերթին տված հարցազրույցի ժամանակ պաստոնական այցով Թուրքիայում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Բաքկեն Արարքյանը հայտարարել է. «Մենք, անշուշտ, պատմությունը չենք մոռանում, տակայն սխալ է զենական քաղաքականությունը կառուցել պատմության վրա: Երկխոսության գործընթացում մենք կարող ենք գտնել ճշմարտությունը: Մեր ժողովրդի համար շատ դժվար է պատմությունը մոռանալ: Ես հավատում եմ, որ ի վերջո թե՛ Թուրքիայի, թե՛ Հայաստանի ժողովուրդները կսովորեն պատմությունը միասնաբար արժեվորել: Մենք պատրաստվում ենք այն տեսակետը, որ որի երկու երկրների սահմանները պետք է բացվեն: Մեր նպատակն է հարաբերությունները խթանել ժամ առաջ»:

«Մենք շատ շոշափելի առաջարկներ ունենք Թուրքիայի համար: Այս երկու օրերին մենք բազմիցս կրկնեցինք դրանք: Իհարկե, Ղարաբաղում շարունակվող հրադադարը դրական ազդեցություն կունենա հարաբերությունների մեղմացման գործում: Իսկ մենք հրադադարից առաջ էլ միշտ ասել ենք, որ «պետք է սովորել այս երկու հարցերը իրարից զանազանել»: Մեր առաջարկը հստակ է: Մենք ասում ենք, որ պատրաստ ենք անել ամեն ինչ, որպեսզի երկու երկրների փոխհարաբերությունները ամենաարագ կերպով ամենաբարձր մակարդակին հասնեն: Սա ոչ թե դիվանագիտական, այլ շատ բացոնով առաջարկ է: Հարաբերությունների հաստատումը նպատակավոր է երկու կողմին էլ», ասել է Հայաստանի Ազգային ժողովի նախագահը:

ԱՐՄԵՆ ԱՄԻԲԵԿՅԱՆ,
Նոյյան Տաղանդ

Հայաստանի վարչատարածքային բաժանումը հույժ գաղտնի

Երեկ Աժ-ը շարունակեց դռնփակ նիստում քննարկել Հայաստանի վարչատարածքային բաժանման մասին օրենքի նախագիծը: Նախագիծը դռնփակ նիստում քննարկելու առաջարկը պատկանում է խորհրդ Հարությունյանին, այն պաշտպանեցին նաեւ Տեր Հուսիկ Լազարյանը եւ Էդ. Եգորյանը: Մեզ չհաջողվեց պարզել, թե հատկապես որն էր նախագծի գաղտնիության պատճառը: ■

ԱՊՐԱՆՔ

Քրեածին իրադրությունը ստիպեց համախմբել ուժերը հանցագործության դեմ պայքարում

ՀԱՍԳԻԿ ԲՈՒԼԱՂԱՐՅԱՆ

ԽՍՀՄ փլուզումից հետո խզվեցին կապերը նաեւ նախկին հանրապետությունների ներքին գործերի նախարարությունների ստորաբաժանումների միջեւ, այդ թվում անցգործության մասնվեցին նաեւ ՆԳՆ համակարգում մշակված հանցագործության դեմ միասնական պայքարի օպերատիվ միջոցառումների ծրագիր-տարբերակները, որոնց շնորհիվ շատ կարճ ժամանակամիջոցում հաջողվում էր բացահայտել կատարված հանցագործություններն ու ձերբակալել նրանց մասնակիցներին: Սրան հակառակ, հանցագործ աշխարհն օգտվեց ներքին գործերի համակարգում ստեղծված խառնաշփոթից, համախմբեց իր ուժերը, ներգրավելով իրավապահ մարմինների նախկին բարձրակարգ աշխատակիցների, որոնք իրենց «լուման» ներդրեցին հանցագործությունների հետագա ոչակական կատարելագործման մեջ: Ծանր օրերս տիվ իրադրությունն էլ ստիպեց ԱՊՀ ՆԳ նախարարություններին համախմբել ուժերն ու միջոցները պայքար արդյունավետ դարձնելու համար: Այս նպատակով երեկ Հայաստանի կառավարության ընդունելությունները տան սրահում աշխատանքն սկսեց ԱՊՀ երկրների ներքին գործերի նախարարությունների ղեկավարների հերթական խորհրդակցությունը, որի աշխատանքներին մասնակցելու համար Երեւան են ժամանել այդ պետությունների ՆԳՆ պատվիրակությունները:

ՍԱՐԳԻՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆԻՆԻ

Երկօրյա աշխատանքի ընթացքում կքննարկվեն մի շարք համընդհանուր ուշադրություն ներկայացնող հարցեր, այդ թվում. Տես էջ 2

ՀԱՄԱՌՈՏ

Ֆ. Կաստրո. Կուբան չի վերադառնա կապիտալիզմի

Կուբան չի վերադառնա կապիտալիզմին, քանի որ կուբացիները դա չեն ուզում, ամերիկյան Սի Բի Էս հեռուստաընկերությանը տված հարցազրույցում երկուշաբթի օրը հայտարարել է Ֆիդել Կաստրոն: Կուբայի ղեկավարը, որը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 50-րդ հոբելյանական նստաշրջանի աշխատանքին մասնակցելու նպատակով գտնվում է Նյու Յորքում, պնդել է նաեւ, որ կոմունիզմը Կուբայում չի պարտվել: Սակայն, ասել է նա, այժմ մեզ հարկավոր է ավելին իմանալ կապիտալիզմի մասին՝ մեր հասարակական կառուցվածքն ավելի արդյունավետ դարձնելու համար: Նա ավելացրել է, որ Կուբայի կառավարությունը «գերծ չէ բերություններից», միեւնույն ժամանակ, այն իր ժողովրդի համար մեծ գործ է արել: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Ամերիկյան կործանիչներ Պարսից ծոցում

ԱՄՆ-ի վարչակազմը էմիրության տարածքում լրացուցիչ ամերիկյան F-16 կործանիչներ տեղակայելու շուրջ հաճախությունն է հասել Բահրեյնի կառավարության հետ՝ Պարսից ծոցի պետություններին Իրաքի զինված ուժերի հնարավոր սպառնալիքից պաշտպանելու նպատակով: Ինչպես հոկտեմբերի 24-ին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը, այժմ Ջորջիայի եւ Հարավային Կարոլինայի նահանգների օդային բազաներում գտնվող 18 ինքնաթիռ շաբաթ օրը կուղարկվի Բահրեյն: Բահրեյնի տարածքում ներկայումս գտնվում է ԱՄՆ-ի ռազմա-օդային ուժերի 60 ինքնաթիռ, նույն ճանապարհով ամերիկյան մարտական մեքենա է տեղակայված Սաուդյան Արաբիայում: ԱՐՄԵՆՊՐԵՍ

Միջին Ասիայի եւ Անդրկովկասի բանկային վերահսկողություն

Հոկտեմբերի 24-25-ը ՀՀ Գիտությունների ակադեմիայի դահլիճում ընթանում է բանկային վերահսկողության բաղելյան կոմիտեի (ԲՎԲԿ) Միջին Արեւելքի եւ Անդրկովկասի խմբի հիմնադիրների կոնֆերանսը: Հայաստան են ժամանել Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Թուրքմենիայի կենտրոնական կամ ազգային բանկերի ներկայացուցիչներ: Կոնֆերանսին մասնակցում են նաեւ ԲՎԲԿ տեխնիկական օգնության կոորդինատոր Էմանուել Կարրերը, Միջազգային հաշիվների բանկի «Արեւելքի երկրներին եւ միջազգային կազմակերպություններին օգնության կազմակերպման» վարչության տնօրեն Անդրե Բասկոլը, Միջազգային զարգացման ֆոնդի դրամավարկային եւ տարադրամային հարցերի վարչության ղեկ Չարլզ Իոնկը, Ֆրանսիայի եւ Նիդեռլանդների պետբանկերի նախագահների տեղակալներ:

Պատգամավորներին եւ հյուրերին ողջունեցին ՀՀ վարչապետ Հ. Բագրատյանը եւ ՀՀ ԿԲ նախագահ Բ. Ասատրյանը: Երեկ ներկայացվեցին ազգային բանկերի վերահսկողության զարգացման աշխատանքները, բաղելյան կոմիտեի վերջին շրջանի ձեռքբերումները, քննարկվեց տարածաշրջանային խմբի ուսուցման ընթացակարգը: Երեկոյան կոնֆերանսի դահլիճում հանդիպեցին ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանի հետ: Այսօր կքննարկվեն Միջին Ասիայի եւ Անդրկովկասի տարածաշրջանային խմբի հիմնադրման, նպատակների համաձայնեցման եւ գործնական առաջարկների հարցերը: Նախատեսվում է ստորագրել համաձայնագիր: Կկարդացվեն հետեւյալ զեկուցումները. «Միջազգային բանկային ստանդարտներ եւ էկոնոմիկայի զարգացումը», «Գործնական վերահսկման զարգացման 10 գերակայություններ», «Հաշիվների միջազգային բանկի գործունեությունը եւ կենտրոնական բանկերի զարգացումը»: Ա. Ա.

Ելցինը խոստացավ խաղաղության զորք տրամադրել Բոսնիային

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, WSJ: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նիստերին եւ 50 ամյակի հանդիսություններին մասնակցելու նպատակով Նյու Յորքում գտնվող Նախագահ Բորիս Ելցինը Հայդ Պարկում առաջին հանդիպում ունեցավ նախագահ Քլինթոնի հետ, որի ընթացում անակնկալ զիջման գնաց եւ համաձայնեց Բոսնիայի հիմնահարցի լուծման համար խաղաղության զորք տրամադրել: Այնուամենայնիվ, երկու ղեկավարների բանակցություններում անդրադարձ չեղավ այն հարցը, թե արդյոք Ռուսաստանը համաձայն կլինի Բոսնիայում իր զորքը դնել ՆԱՏՕ-ի հրամանատարության տակ: Այս շաբաթ Ս. Նահանգներին պատասխանելիս Ելցինը հայտարարեց, որ Ռուսաստանի զորքերը Բոսնիայում կլինեն ՄԱԿ-ի դեր ստանձնելու համար, միաժամանակ ձայնակցելով ՄԱԿ-ի դերը ավելի ազդու դարձնելու Վաշինգտոնի կոչին: ■

ԿԻՊՐՈՍ

Պետրոս Գալայճյանի հաղթանակը ներհամայնքային ընտրություններում

ՏՈՐՈՍ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂ

ՆԻԿՈՍԻԱ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ: Կիպրոսի խորհրդարանում հայ համայնքի վարչական ներկայացուցիչ Արամ Գալայճյանի եղբայր Պետրոս Գալայճյանը հաղթանակ տարավ Նիկոսիայում, Լառնակայում եւ Լիմասոլում անցկացված կիրակի օրվա ներհամայնքային ընտրություններում ստանալով ձայների 60,34 տոկոսը: Նրա մրցակիցը Գեորգ Մաեղեսյանը ստացավ ձայների ընդամենը 39,66 տոկոսը: Ընտրություններն անցնելու կոչվել անցյալ ամիս Արամ Գալայճյանի մահվան առնչությամբ, որը 1981 թ. թվից ի վեր ներկայացնում էր 2000 անդամ հաշվող հայկական համայնքը: Այն համընկավ հանգուցյալի հառաջանքի արարողությանը, որը բաղման նման բազմամարդ չէր եւ անցավ նեղ ընտանեկան շրջանակում: Կիպրոսի ամենանդրությամբ, այլ համայնքների թվում հայկական համայնքի ներկայացուցիչներ մասնակցում են նախագահական, խորհրդարանական եւ տեղական ընտրություններին: Ավելին, նրանք բնում են իրենց հատուկ ներկայացուցիչը, որը վարչում է համայնքի անդամների լիազորությունները, եւ զբաղվում է հայկական համայնքի կրոնական, կրթական եւ մշակութային հարցերով: Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Քրեածին իրադրությունը սիրեց...

Սկիզբը էջ 1

1. ԱԺՀ երկրների ներքին գործերի մարմինների փոխգործողության ամրապնդման հրատապ հիմնահարցեր եւ առաջնահերթ խնդիրներ (ընդհանուր քննարկում).

2. Իրավական օգնության եւ քաղաքացիական, ընտանեկան ու քրեական գործերի գծով իրավական հարաբերությունների միջազգագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին,

3. Տրանսպորտում հանցագործությունների դեմ մղվող պայքարում ներքին գործերի նախարարությունների գործակցության համաձայնագրի մասին,

4. ԱԺՀ մասնակից պետությունների տարածքներում իրավապահ մարմինների աշխատակիցների գտնվելու կարգի ու փոխգործողության պայմանագրի նախագծի մասին,

5. ԱԺՀ պետությունների ներքին գործերի նախարարությունների խորհրդակցության կարգավիճակի փոփոխման մասին,

6. Կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի բիշքեկյան խորհրդաժողովի ղեկավարի հաղորդումը բյուրոյի գործունեության, 1996 թ. հասարակական բվակազմի ծախսերի նախահաշվի նախագծերի մասին,

7. Ներքին գործերի նախարարների հերթական խորհրդակցություն անցկացնելու մասին:

Խորհրդակցության առաջին օրը ողջույնի խոսքով ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Վ. Միրզոյանը, որից հետո, հաշվի առնելով, որ խորհրդակցությունն անցկացվելու է փակ դռների հետեւում, խնդրվեց լրատվական միջոցների աշխատակիցներին լքել դահլիճը:

Օրակարգի համաձայն, օրվա երկրորդ կեսին պատվիրակության անդամներին ընդունեց ԱԺ նախագահ Բաբկեն Արարքցյանը:

ԴԱՏ

Ա. Գրիգորյանը դատարանում դեռեւս ոչինչ չի հայտնել

«Մինչեւ օրս հրատարակվող հարցաքննությունների մեջ ամբաստանյալներից ոչ ոք չի հիշատակել իմ անունը», հոկտեմբերի 24-ին ընթացող «Դրո» գործի դատավարության ընթացքում կոնֆիսկացիային հիշեցրեց ամբաստանյալներից Դեղամ Մանուկյանը: Հրապարակվող հարցաքննությունների բովանդակությունից երեւում է, որ «չէի կարող հեռանալ «Դրո» կառույցից, որովհետեւ տղաներս «Մարտ» էին ինձ» եւ այլն: Նա երկու հարցով դիմեց Ա. Գրիգորյանին. հայտնի՞ է նրա նման դեպք, երբ որեւէ դաշնակցականի հանդեպ, բացի կասեցումից, հեռացումից կամ արտաքսումից, կիրառվեն այլ պատժամիջոցներ: Եւ երկրորդը՝ ամբաստանյալներից որեւէ մեկը հանձնարարություն տալիս ներկայացրե՞լ է իրեն կուսակցական հանձնարարություն: Ամբաստանյալ Գրիգորյանը չպատասխանեց նաեւ իր բախտակցի հարցերին, սակայն հինգշաբթի դատավարությանը մասնակից մյուս բոլոր կողմերին, այնպես էլ նրան խոսացավ պատասխանել ցուցմունքներ տալու ժամանակ:

Երեկվա նիստում հրապարակվեցին Ա. Գրիգորյանի հունվարի 6-ի, 9-ի եւ 20-ի հարցաքննությունները, որոնցից առաջինը փաստաբան Մաքսիմոսյանի հայտարարությունից հետո իբրեւ աղագույց չընդունվեց: Հրապարակված մյուս հարցաքննությունները փետրվարի 2-ի եւ մարտի 17-ի, կատարվել են դատախազության քննիչի կողմից: Դատախազությանը տված վերջին ցուցմունքում ամբաստանյալ Գրիգորյանը որոշ ճշգրտումներ էր մտցրել, բացի այդ հրաժարվել է նախկին ցուցմունքներից, իրեն մեղավոր չի ճանաչել: Թե ինչու խոսացել է դատասխանել դատարանում, որ կասի ողջ ճշմարտությունը: Ավելացրել է նաեւ, որ կուսակցական հանձնարարություն չի կատարել եւ ընդհանրապես հրաժարվել է ցուցմունք տալուց:

Կիսաօրից հետո ցուցմունքներ տալու հերթը ամբաստանյալ Արա Հարմանդարյանինն էր: Վերջինս ցուցմունքներ տալու դատարանակամություն հայտնեց, սակայն հիշեցրեց, որ գործի 8-րդ հատորին եւ ձերբակալման տեսագրությանը, որոնք որսերենով են չի ծանոթացել: Իր դատապանի Ռուբեն Սահակյանի հետ միասին նախագահողի հետ համաձայնության եկան այդ հարցը լուծել դատավարության ընթացքում: Նախագահողը համաձայնեց նաեւ, որ տեսագրության սղագրումը Ռ. Սահակյանը կատարի անձամբ. նախորդ փորձը նկատի ունենալով:

Ս. Պ.

Իտալացիները Երեւանում կարդացին վերջին դասախոսությունը

Վաղը նրանք կմեկնեն Սպիտակ

«Հայ մասնագետների հետ առանձնապես երկար չեմ զբաղվել, բայց ելնելով այն հարցերից, դասախոսություններից եւ դիտողություններից, որ տպվում են մեզ, կարող եմ ասել, որ նրանք շատ լավ դասդասվածություն ունեն, եթե ոչ ավելի լավ, քան մենք»: Այս մասին հայտնեց Իտալիայի «Համալսարանական համագործակցության ինստիտուտի» Հայաստանում գտնվող դասվիրակության ղեկավար գեներալ Ռոյաստի Լան Ֆրանկոն: Պատվիրակությունը երեկ ծրագրով նախատեսված վերջին դասախոսությունը կարդաց ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության կադրերի վերապատրաստման ինստիտուտում: Իտալիայի հեղինակավոր ինստիտուտի 4 փորձագետները, որոնց այցի նպատակների մասին տեղեկացրել էինք «Ազգի» հոկտեմբերի 21-ի համարում, վաղը կմեկնեն Սպիտակ եւ դասընթացներ կանցկացնեն քաղաքաշինության, առաջին բուժօգնության եւ այլ բնագավառներում:

Գեներալ Ռոյաստին տեղեկացրեց, որ փոխադարձ այցով Իտալիա ժամանած հայ մասնագետները ներկայացրել են քաղաքաշինության Հայաստանում գործող համակարգը, իսկ իրենք փոխարենը պատմել են, թե արտակարգ իրավիճակների դեպքում ինչպես են գործում օպերատիվ կառավարման կենտրոնները Իտալիայում, որտեղ կարեւոր դեր է հատկացվում տեխնոլոգիաների կիրառմանը: ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության ղեկի տեղակալ Խաչատուր Կիրակոսյանը հայտնեց, որ Իտալիա կատարած այցելության ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել «Համալսարանական համագործակցության ինստիտուտի» հետ համատեղ Հայաստանում արտակարգ իրավիճակների լրատվական-վերլուծական կենտրոն ստեղծելու վերաբերյալ: Նմանատիպ կենտրոն գործում է նաեւ Իտալիայում եւ կոչված է արտակարգ իրավիճակների ժամանակ համակարգել փրկարարական ծառայությունների գործունեությունը: Լրատվության փոխանակությունը հայ եւ իտալական կենտրոնների միջեւ պարբերական բնույթ է կրելու:

ԱԱԳԻՆ ՄԱՐՏՈՅԱՆ

Արհմիությունը հավակնում է պահանջատե՞ր լինել

Երեկ ուսանողների եւ բուհական աշխատողների հանրապետական արհմիությունը մամլո ասուլիս էր հրավիրել «Արհմիության դերը եւ բուհական կրթահամակարգի հիմնախնդիրները արդի փուլում» թեմայով:

«Մենք չենք կարող կրթահամակարգում հաջողություններ հասնել առանց արհմիութենական նոր մոտեցումների, ասաց արհմիության նախագահ պարոն Վաղարշակյանը: Կրթահամակարգը դարձել է փորձարկումների ոլորտ, նոր Բայկոնուր կամ ատոմակայան»: Ասուլիսի վերջում պարզ դարձավ, որ նախագահի քննադատական բնորոշումները առիթ են հանդիսացել կրթության նախարարության կողմից՝ իրենց եւ արհմիությունների միջեւ հարաբերությունները սառեցնելու հայտարարության: Տրամաբանությունն այնպիսին էր, որ արհմիությունը փորձում է շեշտել իր ճարտարությունը եւ պահանջում է համագործակցել իր հետ ընդունելու թյան քննությունների, կրթության բարեփոխումների եւ այլ ասպարեզներում ծրագրեր մշակելիս եւ անցկացնելիս: Սակայն, իմ կարծիքով, ողջ աշխարհում արհմիությունները (երիտասարդների, թե տարեցների) արդյունքի են հասնում հիմնականում բարձրաձայն պահանջների շնորհիվ: Իսկ այդ մոտեցումը բուհական արհմիությունը (վստահաբար կարող եմ ասել՝ նաեւ ՀՀ արհմիությունների խորհուրդը) չի ուզում ընդունել: Նրանք խաղակիր հորջորջվող ծեւերի կողմնակից են, սակայն դա այս պարագայում կամ նմանվում է անկենդան գոյության, կամ կասկածի տեղիք է տալիս, որ այդպիսով փորձում են կասեցնել ընդվզումը: Իսկ որ ընդվզման պատճառներ շատ կան, եւ որ մշտապես շարժիչ ուժը երիտասարդությունն է եղել, կարծում եմ, երիտասարդությանը ոչ շատ վաղուց հրաժեշտ տվածները չպետք է մոռանան:

ԱՆՈՒՇ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Նշվեց Խրիմյան Հայրիկի ծննդյան 175-ամյակը

Երեկ Շայկովսկու անվան երաժշտական դպրոցի դահլիճում արժանավայել կերպով նշվեց Հայոց կաթողիկոս՝ Խրիմյան Հայրիկի ծննդյան 175-ամյակը: Հոբելյանական հանդիսությունը կազմակերպվել էր Վան Վասպուրականի հայրենակցական միության կողմից: Ցերեկույթի բացումը կատարեց միության նախագահը՝ բանաստեղծ եւ գրահրատարակիչ Լեւոն Միրիջանյանը: Հուզիչ խոսքով ելույթ ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանատեսներ Երուսեղ արքեպիսկոպոս Պոզապալյանը: Մանրամասն զեկուցումով հանդես եկավ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Փափազյանը: Վերջում, լեփ-լեցուն դահլիճի առաջ տրվեց ճոխ համերգ:

Եղիա Նաջարյանը աշխատանքի է հրավիրում «անգործ» լրագրողների

Միայն թե նրանք չլինեն ՀՅԴ-ի, ՀՌԱԿ-ի եւ ՀԿԿ-ի անդամներ

Հոկտեմբերի 24-ին ԱԺ-ի հանձնաժողովների համատեղ նիստերի դահլիճում «Հանրապետություն» միավորմանն անդամակցած Հայաստանի սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը իր «առաջին ինքնուրույն» մամլո ասուլիսն էր հրավիրել: Ասուլիսին մասնակցում էին ՍԴՀԿ Հայաստանի եւ ներքին սփյուռքի նախագահ Եղիա Նաջարյանը եւ դիվանի անդամ Էռնեստ Սողոմոնյանը (երկուսն էլ ԱԺ պատգամավորներ):

Լրագրողները տեղեկացան, որ շաբաթ օր՝ հոկտեմբերի 28-ին երեւանում կբացվի ՍԴՀԿ XVI համագումարը: Սա առաջին համագումարն է, որ հիշյալ կուսակցությունը գումարում է Հայաստանում: Համագումարի պատվիրակների թիվը 62 է: Օրակարգի հարցերից են հայրենիք-սփյուռք հարաբերությունները, հայ եկեղեցու ներսում տիրող իրավիճակը եւ այլն: Ըստ Եղիա Նաջարյանի, «այս համագումարը պետք է գտնի այն բանաձեւը, որը կառաջնորդի մեր-կուսակցության միասնությունը՝ հարգելով ՀՀ օրենքները»:

Անդրադառնալով կուսակցության ղեկավարման հարցին, պրն. Սողոմոնյանը նկատեց. «Ի պատիվ սփյուռքի մեր գործընկերների պետք է ասել, որ նրանք մեզ որեւէ որոշում չեն պարտադրել ընդունել»:

Այնուհետեւ պրն. Նաջարյանը եւ Սողոմոնյանը միմյանցից հերթ խլելով, ներկայացրեցին կուսակցության կառույցները, որի գլխավոր կենտրոնը Երեւանն է:

Լրագրողները տեղեկացան, որ հանգամանքին մասնակցող պատվիրակները ժամանելու են տարբեր երկրներից. Ավստրալիայից, Կանադայից, Լատինական Ամերիկայից, Լիբանանից եւ այլն:

Այսօր կուսակցության անդամների թիվը 2800 է, բայց ՍԴՀԿն «չի ուզում մասսայականացնել իր շարքերը»:

Ասուլիսի ընթացքում հարցեր տալու հնարավորությունը գրեթե բացառվեց, քանի որ ՍԴՀԿ ներկայացուցիչները երկար բարակ հակասական վկայում էին իրենց կուսակցության՝ ՀՀ օրենքներին հավատարմությունը, մոռանալով, որ իրենց դիմաց նստած են ոչ թե արդարադատության նախարարության աշխատակիցներ, այլ լրագրողներ:

Պրն. Նաջարյանը ճանիցս հիշեցրեց, որ ինքը եւս լրագրող է, եւ իր խմբագրած «Հնչակ Հայաստանի» եւ Նաջարյան քաղաքական գործչի ոգով մի շարք եզրահանգումներ արեց, մասնավորապես. «Ազգային կուսակցությունները սփյուռքից պետք է դուրս ընդունած գան»: Եղան նաեւ այլ հայտնություններ, որոնց հղումը չի պատշաճի եւ ոչ մի բերթի (բերեւս միայն «Հնչակին»):

Անկեղծությամբ ՍԴՀԿ-ի նախագահին չէր զիջում նաեւ դիվանի անդամ Էռնեստ Սողոմոնյանը: Անդրադառնալով «Հանրապետություն» միավորման եւ պետահրավական հանձնաժողովի, որի անդամն է, ներկուլիսային քննարկումներին, ուզում էր ասել. «Երդվում եմ, որ հանձնաժողովի աշխատանքներին շատ ակտիվ եմ մասնակցում», բայց վրիպեց՝ «ակտիվ» բառի փոխարեն օգտագործեց «ազնիվ» բառը եւ ստացվեց. «Երդվում եմ, որ ազնիվ եմ...»: Այնուհետեւ ներողություն խնդրեց վրիպակի համար, իսկ մեր ոեպլիկին, թե «հիմա ազնի՞վ եք, թե՞ ոչ», շուտասելուկի պես վրա բերեց՝ «ազնիվ եմ, ազնիվ»:

Այնուհետեւ պրն. Սողոմոնյանը կես կասակ, կես լուրջ նկատեց. «Ընկեր Նաջարյանը էնքան ա խոսում, չի թողնում մի բառ էլ ես ասեմ»: Նույն ոճով էլ մեկ այլ լրագրողի ոեպլիկին ի պատասխան ասաց. «Մենք էլ Դաշնակցության նման գաղտնի կառույց ունենք, բայց չենք ասում»: Նրա անկեղծության չափը այնքան բարձրացավ, որ առաջիկա համագումարի դոնփակ նիստերի գումարումը այս պես մեկնաբանեց. «Ընդհատակյա կուսակցություն ենք եղել, դրա ինքնցիան դեռ գործում է»:

Ասուլիսի ընթացքում պրն. Նաջարյանը մի քանի անգամ անդրադարձավ «Հայքում» տպագրված ՍԴՀԿ պատգամաբերի պատասխանատու խմբագիր Ավետիս Ռազմիկի տված հարցազրույցին եւ ավելացրեց, որ «երկուսի վրա էլ («Հայքի» եւ «Արարատի»-Ն. Մ.) մաս եմ բռի տվել»:

Կարող էինք իհարկե հարցնել, թե ո՞ր իրավունքով եք «Հայքի» վրա մաս բռի տալիս, բայց անիմաստ համարեցինք, քանի որ հատոզված ենք, որ «Հնչակ Հայաստանի» հոկտեմբերի 3-ի համարում տպագրված «Հնչակյանի խոհերը» պատիվ չի բերում եւ ոչ մի բերթի խմբագրի:

Վերջում պրն. Նաջարյանը տեղեկացրեց, որ նախատեսում է նոյեմբեր ամսից ավելացնելու «Հնչակի» պարբերականությունը եւ ասաց, որ աշխատանքի է հրավիրում «անգործ, գործազուրկ լրագրողների, բայց որ նրանք չլինեն ՀՅԴ-ի, ՀՌԱԿ-ի եւ ՀԿԿ-ի անդամներ»:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կհիմնադրվի փրկարարների պատրաստման եվրոպական շրջանային կենտրոն

Եվրոպայի խորհրդի խոշոր բնական եւ տեխնոգեն բնույթի աղետներից պաշտպանության, փոխօգնության եւ համագործակցության բաց մասնակի համաձայնագիրը Արեւմտյան Եվրոպայի երկրներում ունի 12 կենտրոն, որոնք զբաղվում են բնակչությանը խոշոր աղետներից պաշտպանելու եւ ուսուցանելու խնդիրներով: ՀՀ արտակարգ իրավիճակների վարչությունը, որը նույնպես անդամակցում է համաձայնագրին, 1993 թ. դիմել էր կազմակերպությանը Հայաստանում 13-րդ կենտրոնը հիմնադրելու համար: Այս տարի հոկտեմբերի 11-ին համաձայնագրի Ստրասբուրգում տեղի ունեցած մշտական ներկայացուցիչների նիստում, որին մասնակցել է ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության ղեկի տեղակալ Խաչատուր Կիրակոսյանը, որոշում է ընդունվել Հայաստանում հիմնել փրկարարների պատրաստման եվրոպական տարածաշրջանային ուսուցողական կենտրոն: Այն նպատակ է ունենալու կազմակերպել Հայաստանի, Արեւելյան Եվրոպայի, Մերձավոր Արեւելքի եւ ԱՊՀ երկրների փրկարարների ուսուցումը: Ակնկալվում է Եվրոպայի խորհրդից ստանալ տարեկան 90-100 հազար ամերիկյան դոլար:

Գ. Մ.

ՈՒՍԿՈՒԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴՐԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայութիւն / 581841
Ոճը եւ տարածները ՊԱՎԵԼ ԴԱԼԱԲԵՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՀՐՋԱՆ

ԿԻՊՐՈՍ

Գալայճյանի հաղթանակը ներհամայնքային ընտրություններում

Սկիզբը էջ 1

Ներկա ընտրությունները ընդամենը առաջիկա վեց ամսվա համար են նախատեսված, երբ պետք է անցկացվեն խորհրդարանական ընդհանուր ընտրությունները: Այդ քարտուղարի համար սկզբում հինգ հոգի էին մրցակցում, բայց երբ շաբաթ անց նրանցից երեքը հրաժարվեցին, թողնելով 61 տարեկան Գալայճյանին, որին առաջադրել էր կիպրահայ խորհուրդը՝ Ռամկավար ազատական կուսակցության եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության տեղի մասնաճյուղերի եւ համակիրների գլխավորությամբ, եւ 55 տարեկան, անկուսակցական Մահդեսյանին, որին աջակցում էր 33 Դաշնակցությունը եւ նրա համակիր Հայ երիտասարդաց միությունը: Ընտրությունները սկսվեցին առավոտյան ժամը 6:30-ին եւ ընթացան մինչեւ երեկոյան ժամը 6-ը: Համաձայն ներքին գործերի նախարարության ընդհանուր տնօրենի պատասխանատու եւ ընտրությունների պատասխանատու անձնավորության՝ Յորգոս Խորալամբիդիսի հայտարարության, «մասնակցությունը ընտրություններին եղել է 85 տոկոս, որը շատ լավ ցուցանիշ է»:

Չայների հաշվառումը կատարվել է երկու բեկնածուների, նրանց ընտանիքների եւ վստահված անձանց ներկայությամբ: Գալայճյանի պարագայում վստահված անձերն էին բերքի հրատարակիչ Տորջ Տեր Բարթողը եւ պատմաբան հեսազոտող դոկտ. Ագաթի Նասիոյան-Էմմերճյանը, որոնց միանում էին նաեւ գյուղատնտեսության պինժեներ Հակոբ Կարաոջլանյանն ու գործարար Դավիթ Շահաբյանը: Երբ Նիկոսիայի դպրոցներից մեկում բոլոր ձայների հաշվարկումն ավարտվեց, պարոն Խորալամբիդիսի հրամանով բոլոր դռները բացվեցին, եւ ամբոխը ներս մտավ գոռալով «Պետրոս, Պետրոս»:

Դիմելով ներկաներին, հայերեն եւ հունարեն լեզուներով պարոն Գալայճյանն իր հաղթանակը վերագրեց իր վաղամեռիկ եղբորը, որը հիմն էր դրել Կիպրոսի հայկական համայնքի միասնականությանը: Նա ուխտեց շարունակել այդ աշխատանքները եւ նեցուկ կանգնել Հայաստանին ու Արցախին: «Մենք ականատես եմք լինում մեր փոքրիկ համայնքի ներսում ստեղծված միասնականության ոգեկ շրջանին, որի հիմքերը դրեց իմ վաղամեռիկ եղբայրը, ասաց նա: Ես կշարունակեմ նրա անավարտ գործը եւ ամենքիս կանեմ, որ ավարտեմ այն եկեղեցու օրհնությամբ եւ հանուն մեր երկու երկրների՝ Կիպրոսի եւ Հայաստանի աղագա բարորության»:

Գալայճյանը վերանորոգեց Հայաստանի հետ սերտ հարաբերությունները զարգացնելու իր վճռականությունը, ասելով. «Իմ առաջնահերթ խնդիրներից կլինեն Կիպրոսում հիմնել Համահայկական հիմնադրամի եւ Կիպրոս-Հայաստան բարեկամության ընկերության մասնաճյուղեր: Դրանք իրականություն դարձնելու նպատակով ես մտադիր եմ հիմնել խորհրդատու մի մարմին, կազմված բոլոր խավերից, միություններից եւ կուսակցություններից, որոնք մի միասնական ոգի դարձած կաշխատեն ի փառս մեր մայր հայրենիքի»: Նա նաեւ իր վճռականությունը հայտնեց միավորելու Կիպրոսում հայ երիտասարդներին, առաջնորդելու ավելի լավ բժշկական հոգատարություն մեծահասակներին ու կարիքավորներին:

Առաջ Գալայճյանն այցելեց հայկական առաջնորդարան իր հարգանքի տուրը մատուցելու հոգեւորական իշխանությունների: Երբ նա հասավ ՀԲԸՄ-ի կենտրոնը՝ հավաքույթի, երիտասարդները նրան իրենց ուսերի վրա բարձրացնելով առաջնորդեցին դահլիճ, ներկաների «Պետրոս, Պետրոս, հաղթանակ» որոտը դուս բացականչությունների եւ Մելգոնյան կրթական հաստատության նվագախմբի կողմից հայկական հիմնի երաժշտության ներքո: Ընտրությունները ու Գալայճյանի հաղթանակը ամբողջությամբ հեռաստվեցին երկրի 4 հեռուստատեսային կայաններ-ների կողմից, որոնց ցից ոմանք նույնիսկ վավերագրական կադրեր ցույց տվեցին Հայաստանի, նրա պատմության եւ մշակույթի վերաբերյալ: Նրանք նույնպես անդրադարձան Հայաստանի եւ Հունաստանի սերտ հարաբերություններին: Տեղական բոլոր հաղորդակցության կուսակցությունները մեծ բավարարությամբ ընդունեցին Գալայճյանի ընտրությունը եւ խոստացան նրան վերադարձել ամբողջական աջակցություն:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Մեղրին՝ հանրապետության հարավային դարպասը

Մեր թղթակիցը վերադարձել է Մեղրի կատարած գործուղումից եւ ներկայացնում է իր հարցազրույցը Մեղրու շրջգործկոմի նախագահի առաջին տեղակալ Վազգեն Բալասանյանի հետ:

– Շրջանը մեր ընթերցողներին ներկայացնենք ըստ բնագավառների: Սկսենք արդյունաբերությունից:

– Շրջանի հիմնական արդյունաբերական հսկան դղենամոլիբդենային կոմբինատն է: Դժբ. անկախ, այնտեղ կլինեք... Առայժմ ասեմ, որ այն գործում է իր կարողությունների 50-60 տոկոսի չափով: Ունենք դպահածոների գործարան, որն աշխատում է 10, լավագույն դեպքում 20 տոկոսի չափով: Դա հիմնականում կապված է արտադրանքի իրացման դժվարությունների հետ:

– Բայց գոնե հանրապետության ներքին շուկայում դուք այդ խնդիրը չպիտի ունենայիք:

– Ունենք: Այժմ մեր ներքին շուկան հեղեղված է արտասահմանյան գեղեցիկ փաթեթավորմամբ ապրանքներով, եւ մեր արտադրանքին ուշադրություն հիշ են դարձնում: Էժան էլ չենք կարողանում վաճառել, որովհետեւ ինքնարժեքը բարձր է: Այս տարի, օրինակ, մի 5-600 տոննա դեղձ փչացավ գյուղացին գործարան չհանձնեց, որովհետեւ գործարանը կիլոգրամին 20 դրամ էր առաջարկում, իսկ դա այնքան հիշ է, որ տեղափոխման տրանսպորտային ծախսն էլ չի հանում: Մարդիկ որոշեցին իրենք տնայնագործական եղանակով իրենց դեղձը մշակել:

– Բայց այդքանը ոչ օրի քաշել կլինի, ոչ չիր անել...

– Դրա համար էլ ասում եմ՝ փչացավ...

– Իսկ խաղո՞ղ: Գործարանը խաղող չընդունե՞ց:

– Ոչ: Խաղողը պիտի գինու գործարանն ընդուներ: Բայց նույն դպաճառով գյուղացին խաղողն էլ հանձնելիով չէր հանձնում: Ջրի սակավության, բուժանյութի բանկության, մշակման ծախսերի մեծացման հետեւանքով խաղողի ինքնարժեքն էլ է բարձր ստացվում, գինու կոմբինատը բարձր գին առաջարկելու հնարավորություն չունի:

– Հենց դա էլ, երեւի, խփում է խաղողագործությանը. դպաճառ դառնում այգիների տարածքների նվազմանը:

– Խաղողի այգիներն իսկապես շատ են դպակասել: Բայց դա սկսվեց դեռ Գորբաչովի ժամանակներից:

– Հիշում եմ: Ողբ էր: Ողբ երկրի խաղողագործության հերն ա՝ նիժվեց:

– Ահա, դրանից մեզ էլ բաժին հասավ: Դեռ այն ժամանակներից խաղողի այգիներ վերացվեցին, տնկվեցին դեղձի, նռան, արքայախնձորի (ժողովուրդը «կարայլոկ» է անվանում) ծառեր:

– Վերադառնանք արդյունաբերությանը: Է՞լ ինչ ձեռնարկություններ ունեք:

– Կարի ֆաբրիկա ունենք, որը եւ աշխատում է, եւ... չի աշխատում:

Այսինքն, եթե հումք է ձեռք բերում աշխատում է, եթե ոչ կանգնում է:

Ներկա դպահին իր կարողությունների շատ աննշան չափով է գործում:

– Կյանքը ցույց է տալիս, որ դրանց գործելու միակ ելքն այսօր սեփականաշնորհման մեջ է: Այդ մասին չե՞ք մտածում:

– Երեքն էլ, դպահածոների, գինու գործարանները եւ կարի ֆաբրիկան, սեփականաշնորհման ենթակա են, մտցված են տարվա սեփականաշնորհման ծրագրի մեջ: Կառավարության որոշմամբ կա, դասնում են բաց բաժնետիրական ընկերություններ:

– Բաժնետոմսերի ազատ վաճառք իրականացրե՞լ եք:

– Դեռ ոչ: Սպասում ենք հանձնաժողովի գալուն:

– Ուրի՞շ:

– Էլեկտրատեխնիկական գործարան ունենք, դարձյալ մասնակիորեն է աշխատում: Պաների գործարան ունենք, չի աշխատում գյուղացին կաք չի հանձնում...

– Իսկ ունի՞, որ հանձնի: Միգուցե ձեր շրջանում էլ գյուղացուն հանձնած գյուղատնտեսական հումքի դիմաց այնքան մեծ ձգձգումներով եք վճարում, որ վանո՞ւմ եք:

– Չէ, մեզ մոտ այդպիսի ձգձգումներ չկան: Գյուղացին կաք ինչ ուրայց առ այսօր գյուղացիները նրանց մոտ 10 միլիոն դրամի պարտք ունեն:

– Հողի հարկի պարտք չունե՞ն:

– Սահմանամերձ գյուղերը կառավարության որոշմամբ հողահարկից ազատված են, մյուսները 50-60 տոկոսով իրենց հարկերը վճարել են: Մինչեւ տարեվերջ դեռ ժամանակ ունենք, կարծում եմ լրիվ կվճարեն:

– Անցնենք շինարարությանը: Պետական շինարարություն կատարո՞ւմ եք:

– Կատարում ենք, եւ բավական մեծ ծավալով: Ճիշտ է, շինարարությունը մեզ մոտ շատ բանկ է նստում, որովհետեւ ցեմենտն Արարատից ենք բերում, բայց այսօր վերակառուցում ենք Ագարակի միջնակարգ դպրոցը, երկու եկեղեցի, որոնց դրսի աշխատանքներն արդեն ավարտել եւ անցել ենք որմնանկարների վերականգնմանը, Մեղրիում կառուցում ենք հեծտոն կամուրջ, որով Մեղրի գետի երկու ափերին ընկած բաղամասերը կմիանան իրար, դեռի այդ կամուրջը չանող բավական երկար ասֆալտաճանապարհներ ենք կառուցում, երեւի մի ամսից կավարտենք...

Գետի հենապատն ենք կառուցում, բաղամասի բարեկարգման աշխատանքներ ենք կատարում, վերանորոգում դպրոցներ: Այդ աշխատանքների համար տրամադրել ենք 57 միլիոն դրամ: Մշակույթի դպարատի ծածկի վերանորոգմանը տրամադրել ենք 10 միլիոն դրամ, գումարներ ենք հատկացրել մեր կենտրոնացված գրադարանի կառուցմանը. Մեղրի-Ագարակ ճանապարհի ասֆալտապատմանը, կաղի նախարարության հետ ուզում ենք լուծել արբանյակային հեռուստակայանի կայան կառուցելու հարցը, որպեսզի երկանցենք Ղափանի կայանը, որովհետեւ եթե այնտեղ էլեկտրաէներգիան անջատվում է մենք ընդհանրապես զրկվում ենք կապի միջոցներից: Մեր շրջանի ամենագավառ տեղը հենց կապն է. սարքավորումներ հանրապետությունում երեւի ամենահինն են, գործնականում մենք հեռախոսակապ չունենք: Նոր սարքավորումներ պիտի տեղադրենք:

– Բայց այդ բոլորն ահռելի ծախսեր են: Գումարները որտեղի՞ց:

– Տեղական բյուջեից: Ահագին գումարներ ունենք, հիմնականում, իհարկե, դղենամոլիբդենային կոմբինատից ստացված: Դրա հաշվին մենք ոչ միայն հրաժարվել ենք հանրապետական բյուջեով մեզ համար նախատեսված 20 միլիոն դրամի դոտացիայից, այլեւ 70 միլիոն դրամ [illegible] ենք փոխանցել հանրապետական բյուջեին:

– Անցնենք սոցիալական ոլորտին: Մեղրեցին ինչպե՞ս է ապրում:

– Ոչ լավ, ոչ վատ: Մեղրեցին էլ իր խնդիրներն ունի: Գներն, ինչպես տեսաք, շատ բանկ են...

– Այ, դա ինձ շատ զարմացրեց: Մեղրին հանրապետության հարավային դարպասն է, Իրանից բերված ապրանքներն այստեղով են անցնում: Ասում են, որ ապրանքները նախ գնում են Երեւան, հետո նոր վերադառնում Մեղրի ու հանվում վաճառքի, որից գինը անասելի բարձրանում է: Մի՞թե չի կարելի իրանցից հենց այստեղ գնել:

– Իրանցին մեծաքանակ առեւտուր է անում, դրա համար էլ տանում է Երեւան: Մեղրեցին տեղում մեծաքանակ գնում կատարելու հնարավորություն չունի: Եթե մոտաստն գնամ, նրա մոտակայքի առեւտրական շուկայում լինեմ, այնտեղ ավելի մանրամասն կբացատրեն:

• **– Ինչո՞ւ չի աշխատում Մեղրի-Երեւան օդային գիծը: 12 ժամ ավտոբուսում տանջվելու փոխարեն կարելի էր ուղղաթիռով կամ ինքնաթիռով մեկ ժամից էլ շուտ Մեղրի հասնել: Օդանավակայանին ի՞նչ է եղել:**

– Օդանավակայանին ոչինչ էլ չի եղել, գործում է, նույնիսկ միջազգային ավիագծերն է սպասարկում: Ուղղակի բոլորային երթուղու արժեքն է շատ բարձր, ուղեւոր չի կա վարվում: Պայմանագրային կարգով ուղղաթիռներ գալիս են տուրիստական, մարզական կամ մշակութային խմբեր են բերում Էրեբունի օդանավակայանից:

– Բնակչության արտահոսք նկատվո՞ւմ է: Ասենք արտագնա աշխատանքի մեկնելու երեւույթ կա՞:

– Չկա: Բուն մեղրեցին իր հող ու ջրին կապած մարդ է: Գնացողներն էլ շատ քիչ են, հիմնականում այն գյուղերից, որոնք բնակեցվել են փախստականներով: Դա էլ այն պատճառով, որ նախկինում բարդ բարեկամ են եղել, հիմա գյուղական կյանքին դժվար են հարմարվում:

– Սեփականաշնորհման ժամանակ հող չե՞ն ստացել:

– Ստացել են, մեղրեցիներին հավասար: Մշակելիս են դժվարանում: Մեղրիում հող մշակելն արդեն իսկ հերոսություն է...

– Իսկ, իրավաբանների լեզվով ասած, օտերասիվ իրադրությո՞ւնն ինչպիսին է. հանցագործություններ, զողություններ, տուրդմփոց...

– Մեղրեցիները խաղաղ մարդիկ են: Տեղը վոր է, մեկը մյուսին ճանաչում, մեկը մյուսից ամաչում է... Այստեղ աղրեր եւ դժվար է, եւ հեշտ: Մեր բնակարանների գներն, օրինակ, երեւանյան գներին հավասար են: Վաճառողն ավելի հիշ է, քան գնողը, գնացողն ավելի հիշ է, քան վերադարձողը:

– Ձմեռ է գալիս: Մեղրեցին ձմռանը պատրա՞ստ է:

– Եթե ջեռուցումը նկատի ունեք այդ: Կենտրոնացված ջեռուցման հարցը հիմնականում լուծված է, միայն թե գներն են շատ բարձր: Մասնավոր տներում ադրողներն էլ վառելափայտ են ձեռք բերում մեր իսկ անտառներից: Ամենամեծ հոգսը Քաջարան-Մեղրի լեռնանցքն է, եթե փակվեց աշխարհից կտրվում ենք: Դրան էլ ենք դպատրաստվել, եթե ձյուն եղավ արագորեն կբացենք, ժամերի հարց կլինի, օրերի հարց չի լինի: Մի խոսքով լավատես ենք, եւ ոչ միայն ձմռան նախադատրաստման հարցերում: Կյանքը կամաց կամաց հունի մեջ է բնկնում, եւ ի վերջո ամեն ինչ լավ կլինի:

ՌՈԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Զեղադրական

Կուսակցությունները լինում են իշխող կամ ընդդիմադիր: Եթե կուսակցությունը ոչ իշխող է, ոչ էլ ընդդիմադիր, ուրեմն նա ընդհանրապես կուսակցություն չէ: Իշխող հաղթական կուսակցությունը գործադիր իշխանության, մասնավորապես կառավարության մասն է կազմում կամ էլ ներկայացնում է ողջ կառավարությունը: Ընդդիմության արմատական կամ կառուցողական լինելու հանգամանքը դայմանավորված է նրա հաղթական վարիանտի, կեցվածքի դրսևորմամբ:

ՀՌԱԿ-ն ընդդիմադիր կուսակցություն է, բայց այն արմատական մամուլն առավել որակյալն ու արդյունավետն է:

Մենք մեծ տեղ ենք հատկացնում նաև մեր կուսակցական գործունեությանը, քանի որ զգում ենք, որ եթե Հայաստանը ժողովրդավարական երկիր դիտի դառնա, ուրեմն դրա կարևոր երաշխիքներից մեկը բազմակուսակցականության ապահովումն է, իսկ իրական բազմակուսակցություն հնարավոր է միայն ինքնուրույն հաղթական կեցվածք, գաղափարախոսություն ունեցող կուսակցությունների գոյության դայմաններում: Եվ այս ինքնուրույնության դրսևորման շատ դժվար ճանապարհին ՀՌԱԿ-ն ունի որոշակի ավանդ:

Ինչ վերաբերում է մեր հասարակությանը, ապա նրան դեռ դիտի խոսեինք ոչ [illegible] ձայնով: Այդ վիճակը շատ [illegible] անհահնական դիտի լիներ, քանի որ ԱԺ-ում տեղեր չունենայի:

Ինչ վերաբերում է ընդդիմության հաղթական գործոն լինել չլինելու հանգամանքին, ապա եթե մենք դիտենք ընդդիմությանը որպես հաղթական լուրջ երևույթ, ապա դեռ է նշել, որ մինչև 1993 թ. այն, այդ գործոն էր: 1993 թ. սկսած ընդգծված ազդեցություն հաղթական իրավիճակի վրա ընդդիմությունը չունի: Հուլիսի 5-ին դարձ դարձավ, որ հաղթանի որ եթե անցյալ ԱԺ-ում «Հանրապետության» մեծամասնությամբ տեղեր ստանալիք, մեր ժողովրդի հետ դիտի խոսեինք ոչ [illegible] ձայնով: Այդ վիճակը շատ [illegible] անհահնական դիտի լիներ, քանի որ ԱԺ-ում տեղեր չունենայի:

Ինչ վերաբերում է ընդդիմության հաղթական գործոն լինել չլինելու հանգամանքին, ապա եթե մենք դիտենք ընդդիմությանը որպես հաղթական լուրջ երևույթ, ապա դեռ է նշել, որ մինչև 1993 թ. այն, այդ գործոն էր: 1993 թ. սկսած ընդգծված ազդեցություն հաղթական իրավիճակի վրա ընդդիմությունը չունի: Հուլիսի 5-ին դարձ դարձավ, որ դրանից են նաև տնտեսական դրությամբ իրականացվող այն տեղաշարժերը, որոնք անմիջականորեն ներազդում են կենսամակարդակի վրա: Եթե չմոռանենք զանգվածը շարունակի աճել, մեծանա բեռնացումը հասարակության մեջ, եթե միջին խավը էլ ավելի նոսրանա և դադարի սոցիալական գործոն լինելուց, նման բեռնացումն իր արտահայտությունը կգտնի, դժգոհներ կմնավորվեն, որն էլ կազդի ընդդիմադիր կուսակցությունների գործունեության վրա:

ՀՌԱԿ-ը միշտ դատապարտ է համագործակցելու թե իշխանություններին, թե ընդդիմադիր մյուս կուսակցությունների արդյունքում ոչինչ չէր փոխվի, եթե ՀՀՇ-ն հանդես գար ամենմին, այն դայմաններում, որ տեղի ունեցան այդ բնույթի բոլորը, իշխող կազակերդությունը խորհրդարանում կունենար նույնքան, եթե ոչ ավել, ներկայացուցիչ, որքան այդ օր:

Ինչ վերաբերում է ՀՌԱԿ-ի և մյուս կուսակցությունների նմանությունների և տարբերությունների, ապա գաղափարախոսական առումով մենք նման ենք ՀՀՇ-ին, ԱԺՄ-ին, ԱԻՄ-ին: Մենք ազատ շուկայական հարաբերությունների, ազատ տնտեսության կողմնակից ենք: Թեպետ ծրագրեր ունենալը և դրանք

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Ընդդիմություն. 1995 թ. աշուն

Ռուբեն Միրզախանյան. «ՀՌԱԿ-ի խնդիրն է նպաստել պետության ժողովրդավարացմանը»

Հայաստանի հաղթական կրանում ընդդիմությունը կարճ դատմություն ունի: Բանիցս նա փորձել է ապացուցել իր գոյության անհրաժեշտությունը: Այդ անհրաժեշտությունը չէին մերժում նաև իշխանություններ, իհարկե իշխանության առաջին տարիներին միայն: Բազմական հնչազա տեղաշարժերը հանգեցրին նրան, որ իշխանություն_ընդդիմություն փոխհարաբերությունները ծայրաստիճան սրվեցին, մեծացավ փոխադարձ անհանդուրժողականությունը: Երբեմն իրավիճակն այնքան սրվեց, որ նրանց փոխադարձ երկխոսության կոչերը դարձան անիմաստ: Իշխանություններն այրեցին դեղի ընդդիմություն տանող բոլոր կամուրջները, ընդդիմությունն էլ միշտ չէ, որ դահանջեց ընդդիմախոսության ընդունելի մակարդակը: Սա ընդհանուր վարքագծի առումով: Իսկ ինչ վերաբերում է ընդդիմության և իշխանությունների միջև եղած հաղթական տարաձայնություններին, ապա բնականաբար դրանք բախվեցին խորացել են: Ընդդիմությունը հնարաստում է իշխանությունների հաղթական գիծը, իշխանությունները էլ ընդդիմությանը մեղադրում են ազգակառուցողականության մեջ և հրազում ունենալ «կառուցողական ընդդիմություն»: Իսկ արդեն վերջերս հաղթական շրջանակների բոլոր մակարդակներում հնարավոր է հուլիսի 5-ից հետո ակնհայտ դարձած ընդդիմության լռության փաստը և դրա դատճառները: Ինչո՞ւ է լռում ընդդիմությունը, հարցնում են բոլորը: Սակայն հարցողներն այն ասիճան անկեղծ չեն, որ ասեն, թե դատրաստ են, կոզենա՞ն արդյոք լսել ընդդիմության խոսքը: Իսկ ինչդիսի՞ն է ընդդիմության վերաբերմունքը շրջանառության մեջ եղած տարբերակումների հանդեպ՝ արմատական և կառուցողական ընդդիմություն, հնարավո՞ր է արդյոք ընդդիմության համագործակցություն իշխանությունների հետ, որո՞նք են ընդդիմադիր կուսակցությունների նմանությունները ու տարբերությունները, հաղթական գործո՞ն է արդյոք հայաստանյան ընդդիմությունը, ձգտո՞ւմ է նա իշխանության, ի՞նչ հարցերում է հասկանալու նա ընդդիմություն, այս և այլ հարցերի շուրջ զրույցի հրավիրեցինք մի քանի ազդեցիկ կուսակցությունների առաջնորդներին՝ Ռուբեն Միրզախանյանին (ՀՌԱԿ), Վազգեն Մանուկյանին (ԱԺՄ), Պարույր Հայրիկյանին (ԱԻՄ), Սերգեյ Բաղդասարյանին (Դամոկրատ) և ՀՅԴ-ից՝ Ռուբեն Հակոբյանին: Այսօր հրատարակվում է հարցազրույցներից առաջինը, իսկ վաղը և մյուս օր՝ մնացյալները: Հարցազրույցներ նաև ՀՀՇ վարչության նախագահ Տեր Հովսեփ Եսայանի հետ, իմանալու համար իշխող հաղթական ուժի վերաբերմունքը ընդդիմության մասին: Վերջինս դատասխանեց մեր հարցերին, սակայն «տեղեկանալով», որ հարցազրույցն արվել է «Ազգ» թերթի համար, կտրականապես արգելեց այն տպագրել: Կարծում ենք այս փորձիկ փաստն արդեն վերաբերմունք է ընդդիմության (գոնե նրա մամուլի) հանդեպ): Մենք մեզ իրավունք չենք վերապահում ասել, որ ներկայացվող հարցազրույցները ամբողջությամբ են ընդդիմության լռության դատճառը: Բնավ: Մանավանդ, որ կարծում ենք, թե այդ լռությունը հաղթական գիրքորոշում է: Պետք չէ անհամբեր լինել. ընդդիմության 1995 թ. աշունը դեռ չի ավարտվել:

հասարվել չի կարող: Արմատականությունը խորթ է ՀՌԱԿ-ի թե գաղափարական դարձվածին: Ռամկավարությունն ու արմատականությունը հակոտնյաներ են: ՀՌԱԿ-ը կառուցողական ընդդիմություն է, իշխանությունների գործունեության գնահատման դեպքում ոչ միայն մատնանշել ենք վերջիններիս սխալները ու բացթողումները, այլև արձագանգել ենք դրական տեղաշարժերը: Կառուցողական ընդդիմության կարևոր առանձնահատկությունն այն է, որ ոչ միայն քննադատում է այս կամ այն երևույթը, այլև առաջարկներ է անում: Քաղաքական և օրենսդրական դաշտի բարելավման համար ՀՌԱԿ-ը բազմիցս հանդես է եկել առաջարկներով: Բավական է հիշել մեր կուսակցության կողմից առաջարկված Սահմանադրության նախագիծը: Այնուհետև ակտիվորեն մասնակցեցինք ընդդիմադիր կուսակցությունների նախագծի ստեղծման աշխատանքներին: ՀՌԱԿ-ը տպագրեց նաև Ընտրությունների մասին օրենքի իր նախագիծը: Կառուցողականությունը միայն օրենսդրական գործունեությամբ չի սահմանափակվում: Մեր կուսակցության կառուցողական գործունեության վկայությունն են համարում նաև այն, որ ՌԱԿ-ը Հայաստան մտավ իր մամուլով, որը երբեք չի ունեցել ընդգծված կուսակցական բնույթ: Այս վերջին հանգամանքն էլ ճշտում է նոր դատկերացումները ռամկավարազատական մամուլի մասին, մամուլի, որը գաղափարախոսության անմիջական կրողն է: Բացի «Ազգից», սկսեց տպագրվել իր ձևի մեջ միակ տեսակն ամսագիր «Պայքար»: ՀՌԱԿ-ը մեծ տեղ է հատկացնում հարցական միջոցների հետագա զարգացմանը, քանի որ մամուլն այսօր ընդդիմադիր կուսակցությունների համար, որոնք զրկված են քարոզչության էլեկտրոնային միջոցներով իրենց տեսակետները արտահայտելու հնարավորությունից, սենյակի կարևոր դեր ունի: Առանց չափազանցության դատճառ է ասեմ, որ մյուս բոլորից ռամկավար ազատական գաղափարախոսությունը կրող մամուլն ավելի որակյալն ու արդյունավետն է:

Ինչ վերաբերում է մեր հասարակությանը, ապա նման նմանություն չենք նկատում: Այդ վիճակը շատ [illegible] անհահնական դիտի լիներ, քանի որ ԱԺ-ում տեղեր չունենայի:

Ինչ վերաբերում է ընդդիմության հաղթական գործոն լինել չլինելու հանգամանքին, ապա եթե մենք դիտենք ընդդիմությանը որպես հաղթական լուրջ երևույթ, ապա դեռ է նշել, որ մինչև 1993 թ. այն, այդ գործոն էր: 1993 թ. սկսած ընդգծված ազդեցություն հաղթական իրավիճակի վրա ընդդիմությունը չունի: Հուլիսի 5-ին դարձ դարձավ, որ դրանից են նաև տնտեսական դրությամբ իրականացվող այն տեղաշարժերը, որոնք անմիջականորեն ներազդում են կենսամակարդակի վրա: Եթե չմոռանենք զանգվածը շարունակի աճել, մեծանա բեռնացումը հասարակության մեջ, եթե միջին խավը էլ ավելի նոսրանա և դադարի սոցիալական գործոն լինելուց, նման բեռնացումն իր արտահայտությունը կգտնի, դժգոհներ կմնավորվեն, որն էլ կազդի ընդդիմադիր կուսակցությունների գործունեության վրա:

ՀՌԱԿ-ը միշտ դատրաստ է համագործակցելու թե իշխանություններին, թե ընդդիմադիր մյուս կուսակցությունների արդյունքում ոչինչ չէր փոխվի, եթե ՀՀՇ-ն հանդես գար ամենմին. այն դայմաններում, որ տեղի ունեցան այդ բնույթի բոլորը, իշխող կազակերդությունը խորհրդարանում կունենար նույնքան, եթե ոչ ավել, ներկայացուցիչ, որքան այսօր:

Ինչ վերաբերում է ՀՌԱԿ-ի և մյուս կուսակցությունների նմանություններին և տարբերություններին, ապա գաղափարախոսական առումով մենք նման ենք ՀՀՇ-ին, ԱԺՄ-ին, ԱԻՄ-ին: Մենք ազատ շուկայական հարաբերությունների, ազատ տնտեսության կողմնակից ենք: Թեպետ ծրագրեր ունենալը և դրանք հասանելի իշխանությունների, թե ընդդիմադիր մյուս կուսակցությունների հետ, եթե այդ կառուցողական բնույթ է կրում և նպաստում է հասարակության կայացմանը: Այսօր դետության անունից խոսելը, դետականությունը դատասդանելը իշխող կուսակցությունը դարձրել է իր մենաշնորհը: Մինչդեռ դետությունը ներկայացնում են բոլոր ընդդիմությունները, լինի այն կառուցողական թե արմատական, իշխանությունները, մամուլը, հասարակությունը: Եթե դրեն դետությունն սկսում է հանդես գալ իշխող կուսակցությունը, ապա վաղ թե ուշ կառաջանա ոչ հետո անցյալից ծանոթ «դետության և ժողովրդի բռնանի» հասկացությունը: Մենք այսօր ապրում ենք բարդ, հակասական գործընթաց, որը կոչվում է դետության կայացում: Դետությունը կայանում է, թե ինչդե՞ս, դա արդեն այլ խնդիր է: ՀՌԱԿ-ի խնդիրն է նպաստել, որ կայացող դետությունը լինի ժողովրդավարական: Իսկ ժողովրդավարության առումով մենք վերջին մեկ տարին հետընթաց ենք արդում: Փակվում են բերթեր, կասեցվում է ընդդիմադիր կուսակցություններից մեկի գործունեությունը, այս ամենի գագաթնակետը եղավ հուլիսի 5-ը:

«Հանրապետությունը» ճանաչվում էր ստեղծել որոշակի խնդիրների շուրջ. 1-ին փաստաթուղթը գրված էր կառավարության հասցեին խիստ քննադատական ոճով: Յավոք, այնտեղ տեղ գտած խնդիրները հետագայում քննության առարկա չդարձան: Միջկուսակցական միավորման ուղղությունը ձևակերպեցին իրենց առջև դրած խնդիր էին դրել խորհրդարանի գրասենյակը: Եվ որքանո՞վ Ազգային ժողովը - կնդասի դետության [illegible] գալիքը, ցույց կտա ժամանակը, բեղեռ այսօր արդեն ԱԺ-ն իր հաղթական [illegible] կազմակերպեցին [illegible] է: Այսպես անհրաժեշտ է նաև մեկ հատատում անել. քննարկումներ էլ ընդդիմությանը մեղադրում են ազգակառուցողականության մեջ և հրազում ունենալ «կառուցողական ընդդիմություն»: Իսկ արդեն վերջերս հաղթական շրջանակների բոլոր մակարդակներում հնարավոր է հուլիսի 5-ից հետո ակնհայտ դարձած ընդդիմության լռության փաստը և դրա դատճառները: Ինչո՞ւ է լռում ընդդիմությունը, հարցնում են բոլորը: Սակայն հարցողներն այն ասիճան անկեղծ չեն, որ ասեն, թե դատրաստ են, կոզենա՞ն արդյոք լսել ընդդիմության խոսքը: Իսկ ինչդիսի՞ն է ընդդիմության վերաբերմունքը շրջանառության մեջ եղած տարբերակումների հանդեպ՝ արմատական և կառուցողական ընդդիմություն, հնարավո՞ր է արդյոք ընդդիմության համագործակցություն իշխանությունների հետ, որո՞նք են ընդդիմադիր կուսակցությունների նմանությունները ու տարբերությունները, հաղթական գործո՞ն է արդյոք հայաստանյան ընդդիմությունը, ձգտո՞ւմ է նա իշխանության, ի՞նչ հարցերում է հասկանալու նա ընդդիմություն, այս և այլ հարցերի շուրջ զրույցի հրավիրեցինք մի քանի ազդեցիկ կուսակցությունների առաջնորդներին՝ Ռուբեն Միրզախանյանին (ՀՌԱԿ), Վազգեն Մանուկյանին (ԱԺՄ), Պարույր Հայրիկյանին (ԱԻՄ), Սերգեյ Բաղդասարյանին (Դամոկրատ) և ՀՅԴ-ից՝ Ռուբեն Հակոբյանին: Այսօր հրատարակվում է հարցազրույցներից առաջինը, իսկ վաղը և մյուս օր՝ մնացյալները: Հարցազրույցներ նաև ՀՀՇ վարչության նախագահ Տեր Հովսեփ Եսայանի հետ, իմանալու համար իշխող հաղթական ուժի վերաբերմունքը ընդդիմության մասին: Վերջինս դատասխանեց մեր հարցերին, սակայն «տեղեկանալով», որ հարցազրույցն արվել է «Ազգ» թերթի համար, կտրականապես արգելեց այն տպագրել: Կարծում ենք այս փորձիկ փաստն արդեն վերաբերմունք է ընդդիմության (գոնե նրա մամուլի) հանդեպ): Մենք մեզ իրավունք չենք վերապահում ասել, որ ներկայացվող հարցազրույցները հանդում են ընդդիմության լռության դատճառը: Բնավ: Մանավանդ, որ կարծում ենք, թե այդ լռությունը հաղթական գիրքորոշում է: Պետք չէ անհամբեր լինել. ընդդիմության 1995 թ. աշունը դեռ չի ավարտվել:

ՆԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԱՍԵՐԻԿՅԱՆ ՄԱՍՈՒ

Էդուարդ Շեւարդնաձե. «Ողբալի» վրացի՞ն, թե՞ մասնատված երկրի կարգավորողը

Այս հարցը որոնս վերնագիր ընտրած ամերիկացի լրագրող Մայքլ Սոլեկտը «Նյու Յորք Թայմզ» թերթի հոկտեմբերի 19-ի համարի առաջին էջի վրա զետեղված ընդարձակ հոդվածում անդրադառնում է Վրաստանի նախագահի անցած դժվարին ճանապարհին նշելով, որ նա այժմ իր ուսերին կրում է ծանր բեռը մի ժամանակաշրջանի, որի առաջացմանը ինքն անձամբ մասնակցել է: Էդուարդ Շեւարդնաձեն ղեմ է լինեիր մեկն այն ղեկավարներից, որոնց հետ նախագահ Բիլ Քլինտոնը տեսակցելու էր նրանց ԱՄՆ-ում գտնվելու առիթով: Սակայն, ինչպես արդեն «Ազգի»-ն օրվա հոսքում հաղորդել ենք, նկատելով երկրի քաղաքական բարդ իրավիճակից, նա եղբայրամարտ չի համարել մասնակցել ՄԱԿ-ի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական նստաշրջանին: Հոդվածը, որը տպագրվել է այդ ակնկալվող հանդիպման նախօրյակին, հետաքրքիր է մեր հարեւան երկրի վերաբերյալ արեւմտյան հեղինակավոր թերթի մեկնաբանության առումով: Այն հակիրճ ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

կան դաստիարակ զսալ եւ չգիտեր, թե ինչի մեջ է խրվում: «Ես չէի ճանաչում իմ ժողովրդին. ես ինձ նոացող ձյուրի մեջ էի զգում», ասել է նա: Նախագահների եւ բազավորների հետ սեղան նստելու սովոր անձնավորությունը հանկարծ իրեն զսալ եղբայրասպան կռիվների բոհոբոհում, որտեղ ծայրահեղ ազգայնամոլներ կատղի դայմար Լին մղում իրեն հավատարիմ մնացած ուժերի դեմ:

«Չեմ դատկերացնում, թե նրանից ավելի ողբերգական քաղաքական գոյություն ունի», ասում է Քեթի Դոլիձեն վրացի ռեժիսոր, որն ուրիշ մտավորականների թվում անդաստոն խորհրդատուի դերն է կատարում: «Նա շատ առաջ քաղաքական հարուստ կյանք էր վայելում, բայց այժմ իր դատիժն է կրում իր երկրում»:

Բայց, ըստ թղթակցի, այդ դատիժը յուրահատուկ ձեւով է բաժին բռնկել նրան: Երբ ռուսներ, գրում է նա, Գորբաչովին միանգամից գցեցին դատմության աններելի աղբարկղը, ապա վրացիներն ավելի «դաժան» ճակատագիր են տնօրինել իրենց երկրի ղեկավարի համար: Նրանք ցանկանում են, որ նա կարգավորի երկիրը, ետի իրենց վիճակը: Շեւարդնաձեն կարծես թե կարողանում է գլուխ հանել ստեղծված խառնաշփոթից, եզրակացնում է Մայքլ Սոլեկտը: Արժեզկումը, որն այնման բարձր ցուցանիշների էր հասել երկու տարի առաջ, զգալիորեն նվազել է մինչեւ ամսական երկու տոկոսի, ըստ միջազգային արժութային ֆոնդի տվյալների: Երկրում շրջանառության մեջ է մտել նոր դրամանիշը լարին: Եթե անցյալ տարի մի մեծ ցուցանակ գգուշացնում էր Մեթեշի Փելիա հյուրանոցի հյուրերին նեղ մտնելու անդամների ներարկել ստացման (գՆՆի գոյության համար), ապա այս տարի վարիկ հայտարարությունը ծառայում է այդ նույն նոգասակին: Վերանորոգվում են ռմբակոծված շենքերը եւ մարդիկ դարձյալ սկսել են երեկոյան ժամերին փողոց դուրս գալ: Խորհրդարանը գործում է. Մխեդիոնի կիսաաջատնական խմբավորումը, որը նախագահին օգնել էր հաղթանակ տանել քաղաքացիական դատերազմում, վերացված է: Երկրի տնտեսական վիճակը բավական մխիթարական է: Առաջիկայում կատարվելիք դեղի Արեւմտյան ձգվող միջազգային նավթամուղը, որն անցնելու է Վրաստանով, խոստանում է էլ ավելի բարելավել վիճակն իր կայուն եկամտներով: Դա նաեւ լայն հնարավորություն տալիս ներգրավել արտաքին կապիտալ: Հանրապետական դատերազմում, վերացված է: Երկրի տնտեսական վիճակը բավական մխիթարական է: Առաջիկայում կատարվելիք դեղի Արեւմտյան ձգվող միջազգային նավթամուղը, որն անցնելու է Վրաստանով, խոստանում է էլ ավելի բարելավել վիճակն իր կայուն եկամտներով: Դա նաեւ լայն հնարավորություն

ՀԱՄԱՌՈՏ

Վրաստան-Թուրքիա-Ադրբեջան. Միացյալ էներգահամակարգի նախագիծ

ԹԲԻԼԻՍԻ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակում է Վրաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի էներգահամակարգերը միաձուլելու նախագիծը: Այս մասին BSP գործակալությանը տեղեկացրել է Ազերեներգո ընկերության նախագահ Մուսլիմ Իմանովը: Ըստ նրա, նախատեսվում է էլեկտրահաղորդման գծեր անցկացնել երեք երկրների տարածով. Վրաստանում 200 կիլոմետրանոց գիծն անցնելու է Ախալցխայով: Թուրքական գիծն իր հերթին կառված է արաբական երկրների էլեկտրահամակարգին:

Բուշիրի ատոմակայանը կշահագործվի 2000 թվականին

Նոյեմբերին ռուսատանյան ճարտարագետներն Իրանում կսկսեն ատոմային էլեկտրակայանի շինարարությունը: Ասոշեյթեդ պրես գործակալությունը հայտնում է, որ Բուշիրի էլեկտրակայանը շահագործման կհանձնվի մինչեւ 2000 թվականը: Արեւմտյան երկրները դեմ են այդ էլեկտրակայանի շինարարության ծրագրերին, քանի որ կասկածում են, թե Իրանը բոլորից գաղտնի զենքի ստեղծմամբ է զբաղվելու: Իսրայելի ղեկավարների կարծիքով, հնարավոր է, որ 5 տարի հետո Իրանն արդեն ատոմային զենք ունենա:

Սերբերը ազատեցին 2 թուրք լրագրողների

Բոսնիական սերբերի եւ Սարաեւոյի կառավարության միջեւ տեղի ունեցած գերիների փոխանակությամբ սերբերն ազատել են 2 թուրք լրագրողների: Ինչպես հայտնել է թուրքական կարմիր խաչի եւ մահիկի ներկայացուցիչը, 2 թուրք լրագրողներ, օգնություն ցուցաբերող գործակալությունների 3 աշխատակից եւ 6 բոսնիացիներ փոխանակվել են 10 սերբերի հետ: Գ. Է-Ս.

Չեչնիա. Հաջիեւը ազատվեց դաշտոնից

ՍՈՍԿՈՒ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Հոկտեմբերի 23-ին դաշտոնից ազատվեց Չեչնիայի կառավարության նախագահ նշանակված Սալամբեկ Հաջիեւը: Իրա զեկ աղբյուրները ընդգծում են, որ վարչապետ Չերնոմիրդինը նրան նոր դաշտոն է առաջարկել Մոսկվայում: Նոր դաշտոնի մասին առայժմ ոչինչ չի հաղորդվում: Հիշեցնենք, որ մինչեւ 1991 թվականը Հաջիեւը ԽՍՀՄ նավթարդյունաբերության նախարար էր:

ՈՒՍՍԱՍՏԱՆ

«Սվյազինվեստի» առաջարկը մնում է անդատասխան

Այն կարող է հաղթական բույր կրել դեկտեմբերին

Ռուսատանի կառավարությունը հույս ունի մինչեւ տարեվերջ սեփականաշնորհումներից ատանալ 2 միլիարդ դոլար, ասկայն ընդամենն այդ գումարի 10 տոկոսն է կարողացել հավաքել, ըստ «Ռոյ Սրիթի Ջոնսի» հեղինակավոր ամերիկյան թերթի հոկտեմբերի 11-ի տվյալների: Դրանից եւ դեֆիցիտին շատ կանխիկ դրամ հասցնելու անհրաժեշտությունից դրդված վերջերս կառավարությունը որոշել է վաճառքի հանել «Սվյազինվեստ» հեռախոսային դատական ընկերության 25 տոկոսը, ակնկալելով այդտեղից ստանալ մոտ 2 միլիարդ դոլար: Սակայն արտահանման կաղնտայի ներդրման կոչերն այնման էլ արագ արձագանք չեն գտնում: Ամերիկյան Էյրի ենդ թի, Յուես Ունեսթ, Ֆրանսիական Ֆրանս թելեկոմ, գերմանական Դոյչթելեկոմ, ինչպես նաեւ ճապոնական, անգլիական եւ ֆինլանդական հեռախոսային ընկերությունները շատ զգուշավոր մոտեցում են ցուցաբերում ռուսական առաջարկին այն դատճառով, որ, ինչպես թերթն է նշում, դեռեւ դարզ չէ «Սվյազինվեստի» գործերում, չկան անցյալ տարիների եւ ամսվա, շահույթի ու կորստի վերաբերյալ համադատասխան տվյալներ: «Մենք հավելյալ տեղեկությունների են սդասում», ասել է Ֆրանսթելեկոմի մի ներկայացուցիչ: «Սվյազինվեստի» տեղական հեռախոսային ծառայությունների գանցը շահագանց բնդարձակ է եւ ընդգրկում է ամբդդ Ռուսատանի Դաշնության տարածքը, բացի Չեչնիայից եւ Թաթարստանից: Նրա Մոսկվայի եւ Պետերբուրգի կենտրոնները դարզապես «գոհարներ» են համարվում: Իսկ ավելի շահութաբեր միջազգային հեռախոսային ծառայությունների զբաղվում է Ռոստելեկոմը:

Շահագրգռվածության դակասի դատճառներից մյուսն այն է, որ համաշխարհային տեսդյում 19 այլ երկրների հեռախոսային ընկերություններ սդստում են նման կանդի տալ ներդրումների: Այդ բոլորի դա հանձներ բանարարելու համար ամսդիկս մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ է գտրացնել ավելի քան 36 միլիարդ դոլար:

Սակայն առայժմ ոչինչ չի տարհամդում կամ հուսալքում Ռուսատանի սեփականաշնորհման կենտրոնի նախագահ Մաքսիմ Բոյկոյին, որ համոզված է, թե իրենց հնարավորություններն այդ հարցում մեծ են, քանի որ Ռուսատանն ունի 150 միլիոն հեռախոսային բաժանորդ, բայց ծախսում է իր համախառն արտադրանքի ընդամենը 0,7 տոկոսը: Կառավարությունը հույս ունի «Սվյազինվեստի» 25 տոկոսի վաճառքից գոյացած 2 միլիարդից դին տական գանձատուն ստանալ մոտ մեկ միլիարդ դոլար, որից հնարավոր կլինի 750 միլիոն դոլար հատկացնել նորոգելու հին գծերը եւ բացելու նորերը: Ներկայումս երկրում յուրաքանչյուր 100 հոգուն 16 հեռախոսագիծ է հասնում, համեմատած ԱՄՆ-ում 60 գծի հետ: Ընկերությունը ծրագրել է ներկա ներդրումների եւ հետագայում ևս 25 տոկոսի սեփականացման միջոցով էլ ավելի բարելավել դրությունը: Սակայն բնդդիմադիրներն արդեն սկսել են մեղադրել կառավարությանը, որ ազգային հարստություններ ֆանտազանց էժան գնով է վաճառում, այնդես որ, դիտարկների կարծիքով, վաճառքը կարող է հաղթական բույր կրել առաջիկա դեկտեմբերին տդասվող Պետդումայի ընտրություններում, գրում է «Ռոյ Սրիթի» մեկնաբանը:

Մյուս կդմից Մաքսիմ Բոյկոյի լավատեսական ակնկալդությունները կարող են արդարանալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգլիական Ռոբչդդ կոնսորցիումի մաս կազմող Բեհինգզ Ինց խմբի ստդումները ցույց են տվել, որ Ռուսատանում հեռախոսային հարդրակցդություններից ստացված եկամտն զգալիորեն ավելանալու է 1997-ին հասնելով մինչեւ 6 միլիարդ դոլարի, այս տարվա 3,58 միլիարդի փոխարեն:

Հաստատ գիտենալով, որ ներդրումների արդյունքներ նրանք կնկատեն միայն երկար տարիներ անց, օտարերկրյա ընկերությունները դդդում են, ու նախման որեւէ հայդ դի մեկը հաստդ դատկերացում ունենան առաջարկվող «ադրանքի» վերաբերյալ: Նրանք իրավացի են այդ հարցում: Ն. Օ.

ՀԱՄԱՌՈՏ

Նոր մայրուղի Թուրքիայից Ալբանիա

ԱՆԿԱՐԱ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓՍՍ: Թուրքիան հայտարարեց, որ ՍԱԿԻ 50 ամյակին նվիրված արարողություններին մասնակցած չորս դետությունների ղեկավարներ Նյու Յորքում ստորագրել են Ալբանիայից Թուրքիա մի մայրուղի կառուցելու համաձայնագիր: Թուրքիայի նախագահի գրասենյակի հրադարակած հայտարարության մեջ նշվում է, որ Սամբուլից մինչեւ Ալբանիայի Դուրես նավահանգիստը ձգվելիք մայրուղին կկառուցվի չորս տարվա ընթացքում եւ կարժենա մեկ միլիարդ դոլար: Համաձայնագիրը ստորագրվել է հոկտեմբերի 22-ին Ալբանիայի, Թուրքիայի, Բուլղարիայի նախագահների եւ Մակեդոնիայի ժամանակավոր նախագահի կողմից: Մայրուղին կանցնի Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայի հարավային հատվածով եւ Մակեդոնիայի տարածքով դեպի Դուրես, որտեղից կտեղափոխվեն լաստանավերով:

Թուրքիան մահմեդականների «լույսի փարոսն է»

23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՏԱՏ: Կրոնի գործերի վարչության նախաձեռնությամբ Անկարայում սկսվեցին Միջին Ասիայի, Կովկասի եւ Բալկանների բուրխանս եւ մահմեդական երկրների ու համայնքների կրոնական ներկայացուցիչների գիտագործնական կոնֆերանսի աշխատանքները: Բացման թոսքով հանդես եկավ Կրոնի գործերի վարչության նախագահ Մեհմեդ Նուրի Յըլմազը: Այնուհետեւ կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց Թուրքիայի Ազգային մեծ Ժողովի նախագահ (ԹԱՄԺ) Իսմեթ Սեզգինը: Նա մասնավորապես ասաց, «Արդի աշխարհում բուրք եւ ընդհանրապես բոլոր մահմեդականների միասնությունը անհրաժեշտություն է դարձել, եւ կրոնի ներկայացուցիչները այդ ուղղությամբ ոչ մի ջանք չպետք է խնայեն»: Առա ելույթներ ունեցան տարբեր երկրներից ժամանած կրոնական գործիչներ: Նրանք իրենց ելույթներում նշում էին, որ Թուրքիան մահմեդական ժողովուրդների համար այսօր «լույսի փարոսի դեր է խաղում»: Կոնֆերանսում ելույթներ ունեցան նաեւ դետնախարար Նեջմեթդին Ջեւհերին, Մայր հայրենիք կուսակցության նախագահ Մեսուդ Յըլմազը, Մեծ միություն կուսակցության նախագահ Մուհսին Յազըջըօղլուն եւ ուրիշներ: Գ. Ջ.

Ադրբեջանը գազի սդառումը կրճատում է մոտ 60 տոկոսով

Այս տարվա 4-դ եռամսյակում Ադրբեջանում գազի սդառողների 60 տոկոսը գազ այլեւս չի ստանա: Պատճառն այն է, որ Ադրբեջանը հրաժարվել է բուրմենական գազից: ԵՍ

Դերմում ստեղծել են դիմացկուն տախտակներ

Դերմի «Տելտա» ընկերությունում ստեղծվել է այդդես կոչված հակավանդալային տախտակ: Այն ջարդելու համար խուլիգաններն սդիդված կլինեն բավական չարչարվել: Նոր հեռախոսի իրանն ավելի ամուր է, բվային սկավառակը փոխարինված է կոճակներով: Նորույթի առաջին խմբաանակը փորձարկումների համար առաքվել է Բուլղարիա, որտեղ հեռախոսային ելուզակության խնդիրը նույնպես դեռ լուծված չէ: ԵՍԼ-«ԻԶՎԵՍՏԻԱ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Երևանի կրկեսն ուղղում է մեջքը

Մինչև հոկտեմբերի 30-ը մոսկովյան արտիստների հյուրախաղերը, նոյեմբերի 18-ից՝ վրացիների

Ոչ հեռու անցյալում մեր կրկեսը հովանավորվում էր Մոսկվայի պետական կրկեսի կողմից, հաճախ էր մեկնում հյուրախաղերի: 4-5 տարի է կրկեսային ծրագիր չի ներկայացվել. մնացել է միայն շենքը անհասանելի կենցաղային պայմաններում: Հայկական կրկեսի տնօրենությունը փորձում է հաղթահարել դժվարությունները եւ վերադարձնել իր երբեմնի փառքը: Սեպտեմբերի 30-ից Մոսկվայի պետական կրկեսի երկու խմբեր (կրկեսային Էկզոտիկ ծրագիր եւ թռուկների շոու) աշխատում են հայկական կրկեսում: Ինչպե՞ս հաջողվեց կազմակերպել այդ հանդիպումը: Ցուցեցի մշակույթի վարչական գործիչ, տնօրեն Հմայակ Խաչատրյանի եւ արվեստագիտության թեկնածու, միջազգային մրցույթների դափնեկիր, գեղարվեստական ղեկավար Սոս Պետրոսյանի հետ: Նրանց տեղով, այս տարվա հունվարի 24-ից նախատեսված էր մեկնել Մոսկվա եւ հյուրախաղերի հրավիրել որեւէ կրկեսային խումբ: Մշակույթի նախարարությունը փորձ գոնար էր տրամադրել ճանապարհածախսը հոգալու համար: Հարկ եղավ երեք անգամ մեկնել Մոսկվա. մեր պայմաններից ելնելով ոչ ոք չէր համաձայնում գալ այստեղ: «Միայն վերջերս հաջողվեց իրականացնել մեր նպատակը. եւ Երեւանի պետական կրկեսը նորից բնեցեց շնորհիվ ռուսական կրկեսի մեր կոլեգաների: Հյուրանոց չտեսնեմ, ջուր չկա, հյուրերն ապրում են կրկեսի հանդերձարաններում»:

«Գո՞հ են արդյոք մոսկվացիները եւ ինչպես են աշխատում Հայաստանում» հարցին Մոսկվայի պետական կրկեսի առաջին խմբի ղեկավար Յուրա Լատչինը պատասխանեց. «Այսքան լուրջությունից հետո հայկական կրկեսում մենք առաջին ծիծեռնակներն ենք: Հոկտեմբերի 30-ին մեր հյուրախաղերն ավարտվում էին. սակայն որոշվեց երկու շաբաթ էլ երկարացնել: Եկել ենք ինքնաթիռով, հնարավորություն չունեցանք ոչ գազաններ, ոչ էլ անհրաժեշտ զվարճարարներ փոխադրել, բերել ենք այն, ինչ հնարավոր էր: Նորմալ աշխատելու համար այստեղ պայմաններ չկան: Ապրում ենք հարդարանենյակներում, երբեմն խմելու ջուր էլ չի լինում, աշխատավարձը շատ ցածր է, եւ եթե չլիներ կրկեսի տնօրենության, հայ հանդիսատեսի ջերմ վերաբերմունքն ու ուշադրությունը, ժամկետից շուտ կվերադառնայինք Մոսկվա: Վերջերս հրավեր ստացանք Վրաստանից, բայց հրաժարվեցինք, քանի որ վիճակն այնտեղ ավելի վատ է: Մեզ հետ աշխատում են նաեւ հայ արտիստներ»:

Երկրորդ խումբը թռուկներն են ներկայացնում. ծրագրում կրկեսային Էկզոտիկ շոու. հիմնականում Լատրաղա. ունեն նաեւ տիկնիկներով ու շներով համարներ:

«Արդեն երրորդ տնգամ ենք Հայաստանում: Մեր փոքր աստղերի կոլեկտիվը ձեւավորվել է 30-ական թվականներին Կոլուրիների գլխավորությամբ: Սկզբում կրկեսային ծրագիր էին ներկայացնում 5-6 հոգի, իսկ հիմա մեր խմբում 20 արտիստ կա երկրի տարբեր շրջաններից: Ի դեղ, հոկտեմբերի 25-ին Երեւանում կնշեմ խմբի 60-ամյա հոբելյանը», ասաց կրկեսային շոու ծրագրի թռուկների կոլեկտիվի տնօրեն Նիկոլայ Միսյուրան:

Հյուրերի կարծիքով, նման դայմաններում կրկես աշխատեցնելը համարձակ քայլ է: Տանտերերն էլ սա հասկանում են. կառավարությունից 4-5 տարի է հովանավորություն են ակնկալում ու բնական, նաեւ անբնական դարաշրջանի մեջ էին: Մինչեւ ե՞րբ...

Նոյեմբերի 18-ից Երեւանի դեպանական կրկեսի գմբեթի տակ հանդես կգան Վրաստանի կրկեսի արտիստները. ծրագրում համարներ գազանների հետ: Տնօրենությունն ամեն ինչ անում է. որ Ամանորյա տոներին երեւանյան բազմաթիվ բաստոնների կողքին վառվեն նաեւ կրկեսի լույսերը:

ՆԱԻԲԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչատրյան համերգասրահում անգլիացիները ՀՖՆ-ի կատարմամբ Խաչատրյան են հայնագրում

Անգլիացի Բրայան Բալմերհաուսը միջազգային Ձայնագրման կենտրոնի դրոշակակրներից է, որն արդեն 5-րդ տարին է, ինչ հարաստան է գալիս Հայաստանի Ֆիլհարմոնիկին Ձայնագրելու: Արամ Խաչատրյան Մեծ համերգասրահում նա եւ նրա օգնական Ճիլբոր Փեհլին այս շաբաթ օրական 7-8 ժամ զբաղված են հատկանելս Արամ Խաչատրյանի երաժշտությունը կոմպակտ սկավառակների վրա Ձայնագրելով: Աշխատանքային դրան էր, 10 հոգեանոց դաղաղին սիրով համաձայնեց մի քանի հարցերի դատասխանել:

- Երբվանի՞ց է Ձեր համագործակցությունը Հայաստանի Ֆիլհարմոնիկի հետ:

- Լորիս Ճգնավորյանին ճանաչում եմ արդեն 20 տարի: Սոտիկից գիտեմ, եւ երբ ՀՖՆ-ի ղեկավար նշանակվեց, մեկ տարի անց ինձ հրավիրեց ձայնագրություններ կատարել: Մեր հիմնական նպատակն էր Արամ Խաչատրյանի բոլոր ստեղծագործությունները ձայնագրել, դրա համար սկսեցինք փնտրել կոմպոզիտորի բոլոր գործերը, քանի որ դրանք դժբախտաբար հոգատար ձեռքերում չլինելով՝ չեն պահպանվել: Նախկին ԽՍՀՄ-ում եւ Հայաստանում՝ Ճգնավորյանի, Անգլիայում՝ իմ ջանքերով ի մի բերեցինք բավականաչափ նյութ: Դժվար աշխատանք է, շատ ընկերություններ խստապահանջ չլինելով՝ կորցրել են Վարդեսի ստեղծագործությունների շատերը: Որոնումներն այսօր էլ շարունակվում են: Սա ես համարում եմ իմ կարեւորագույն գործը. դարերի ընթացքում տարիներից ծանոթ եմ հայ ժողովրդի դատմությանը, մշակույթին: Հայաստանը բավականաչափ ներկայացված չէ աշխարհին, իսկ ներկայացնելու ահագին բան կա:

Հայ կատարողական արվեստին ծանոթացել եմ Լորիս Ճգնավորյանի միջոցով, որի հետ Լոնդոնի սիմֆոնիկը ձայնագրեց Խաչատրյանի բալետային ստեղծագործությունները: Ծանոթացա նաեւ ամերիկյան RCA ընկերության ձայնագրություններին, որոնք բավականաչափ հաջող էին: Դորտուգալացի մի դաշնակահարուհու կատարմամբ մեր ձայնագրած Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտն այստեղ էլ ձայնագրելու ենք հայազգի ամերիկուհի Բուն Սեւերյանի կատարմամբ, որն երեւան է ժամանել հատկապես այս ձայնագրության համար:

- Նախորդ ձայնագրությունները ո՞ր երկրների շուկայում են հետաքրքրություն նվաճել, ի՞նչ արժեն:

- Արեւմուտքում, ԱՄՆ-ում, Անգլիայում, եվրոդական երկրներում, Ավստրալիայում, աշխարհի բոլոր երկրներում, որտեղ ձայնագրման կենտրոններ կան: Մեծ արձագանք են գտել ԱՄՆ-ում եւ Ճապոնիայում: Յուրաքանչյուր սկավառակ ԱՄՆ-ում վաճառվում է նվազագույնը 13 դոլլարով, մնացած երկրներում՝ ավելի բանկ:

- Նոստակահարմար չե՞ք գտնում երեւանում էլ դրանց վաճառքը կազմակերպել:

- Դա ֆիլհարմոնիկի ղեկավարության հայեցողությանն ենք թողնում:

- Ձեր համագործակցությունը միայն ֆիլհարմոնիկի հետ է լինելու:

- Այո: Ճգնավորյանը միջազգային ճանաչում ունի եւ ղեկավարն է Հայաստանի թիվ 1 նվագախմբի:

- Ներկա ձայնագրությունները ե՞րբ շուկա կհասնեն:

- Թողարկելու ենք 3 սկավառակ, որոնք միջազգային շուկա կհասնվեն հաջորդ տարվա կեսերին: Նախորդ ձայնագրությունների երկրորդ սկավառակը սեպտեմբերին վաճառքի հանվեց: Որոշ դաղարից հետո շուկան նորից Հայաստանի Ֆիլհարմոնիկի արտադրանքը կունենա:

- Ճանո՞թ եք Հայաստանում գործող անկախ ռադիոկայաններին: Արդեն մեկ տարի գործող Հայ-FM-ը բազմաթնույթ երաժշտություն է հաղորդում: Չէի՞ք ցանկանա համագործակցել:

- Չեմ լսել նրանց մասին, բայց անշուշտ, հետաքրքիր կլիներ ծանոթանալ եւ գործակցել՝ հույս ունենալով, թե նրանք մեր ձայնագրությունները կսիրեն:

ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Բացվեց Հարությունյանի ցուցահանդեսը

Առաջին օրվա այցելուն ընդգծված տարբերվում էր արտաքին տեսքով. մյուս ցուցահանդեսներում նրան հազիվ թե հանդիպեիր

Երեկ TAAK art moderne գալերեայի երկու ցուցասրահներում բացվեց հայտնի ճանաչված նկարիչ Հարություն Պզտիկյանի անհատական ցուցահանդեսը, որին հատկացրեց «Ազգի» բերեցողն առանձնահատուկ հետաքրքրությամբ էր սպասում (դեռեւս հունիսին մեր բերի էջերում նկարչի հետ ծանոթանալ հարցազրույցի վերջում տեղեկացրել էինք, որ հոկտեմբերին Պզտիկյանի արվեստը կներկայացվի հայրենիքում): Աշխարհի տարբեր մեծ ու ճանաչված տեսակետներին ավելացավ Պզտիկյան արվեստագետի անհատական ցուցահանդեսի եւս մեկ հասցե Երեւան. Գրականության եւ արվեստի բանգարան, որի տեսնելու վերջին կոնցեպտուալիստական ցուցահանդեսի դրդակ դիցուցանելից, գունավոր փետուրների ու վառվող լույսերի հայկական դրամանիշի հաղթակամարից, ուտիլիտով լիր ատոնատանից «բեռնաբափված» մի հիշ զարմացած ընդունել էին արտասակարգ 40 ստեղծագործությունների շքեղ ներկայությունը: Եւ ոչ միայն... Գալերեայի ցուցասրահներում երեկ հավաքված հասարակությունը բազմաշերտ էր. արվեստագետների, ցուցահանդեսներից ծանոթ դեմքերի կողքին «հայ տգամարդկանց լավագույն կնոջ» նկատելիորեն առանձնացող դաշտոնական փոյկաղավոր տեսքի մեջ: Ցուցահանդեսի հովանավորը «Շամիրամ» հասարակական հաղորդական կազմակերպությունն է, որի բազմաշերտ գործունեությանն («Աշխարհի բոլոր սխրանք գործերն ազում ենք անել», Գայանե Սարոխանյան, «Շամիրամի» նախագահ) ավելացավ եւս մեկը մշակույթի հովանավորումը: Աժ դրաստամավոր Ագաս Արշակյանը «Շամիրամի» միջոցով է իմացել, որ «այդպիսի ցուցահանդես կա», ԱԳՆ մամուլի քարտուղար Արամ Սաֆարյանն էլ «Շամիրամի» հետ լավ բարեկամությանն է դրատական, որ ներկա է նկարիչ Պզտիկյանի ցուցահանդեսին:

TAAK գալերեայի տնօրեն Թադեոս Առակյանը Պզտիկյանի ստեղծագործությունը բնորոշեց որդես «տիեզերքի ինդիվիդուալ սինթեզի վերարտադրանք»: Նկարիչների մասնությանն նախագահ Պարոն Հայրապետը տեղեկացրեց, որ Հարությունի Պզտիկյանի Երեւանում բացված ցուցահանդեսը հետագայում այլ հասցեներ էլ կունենա: Պզտիկյանն այսօրվանից Հայաստանի նկարիչների միությանն դրաստավոր անդամ է դառնում. «Ազգին» հաղորդեց որդ. Հայրապետը: Ցուցահանդեսի մասին մանրամասն մեր հաջորդ համարներում:

ԱՌ. Հ.

ՀԱՄԱՌՈՏ

Վախճանվել է Վահե Սեթյանը

Սոնրեալում վախճանվել է Վահե Սեթյանը, տեղեկացնում է «Ամերիկայի ձայնը»: Հանգուցյալը զգալի ավանդ է ներդրել Լիբանանի հայ գաղութի ազգային, կրթական, մշակութային կյանքի վերելքի ասպարեզում: Նրա մշակութային ծառայության կարեւոր արտահայտություններից մեկը «Վահե Սեթյան» արդիական տպարանի ստեղծումն է Լիբանանում: ԱՐՍԵՆՊՐԵՍ

Սալվատորե Ադամոն կերգի հայերեն

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍ: Հոկտեմբերի 27-ին եւ 28-ին աշխարհահռչակ երգիչ Սալվատորե Ադամոն համերգներով հանդես կգա Լոս Անջելեսում: Առաջին անգամ նա իր ամենահանրածանոթ երգը կկատարի հայերեն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 26-ին, ժամը 14:30-ին Գորոնների տան մեծ դահլիճում տեղի կունենա հանդիպում Վանաձորի գրական բաժանմունքի անդամների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐ

Ձեռարվեստի ցուցահանդես

Հոկտեմբերի 24-ին Վանաձորի կերդարվեստի բանգարանում բացվեց ՀՕՄ-ի հարավային մասնաճյուղի 5-դ տարեդարձին նվիրված ձեռարվեստի ցուցահանդեսը: Բացման հանդիսությանը նույնը ունեցան հայ երգի եւ ասմունքի համաձայնային փաստասնի դասիենկիները: Բացման խոսք ասաց եւ աշխատանքի հեղինակներին բարեմաղթանքներ հղեց ՀՕՄ-ի Վանաձորի մասնաճյուղի ատենադրապետ Մարիամ Էդիլյանը:

Շարդ 6 տասնյակ ասեղնագործական, փայտագործական, գոբելեն, օսիբանա (չորացրած ծաղիկներով ու բույսերով) աշխատանքները գեղագիտական մեծ բավականություն դասնեցին ոչ միայն վանաձորցիներին, այլեւ դրաստավոր հյուրերին: ՀՕՄ-ի Հայաստանյան վարչության ատենադրապետ Արվարդ Պետրոսյանին, Յերեւանի Կարդույս խաչի ատենադրապետ Ժանետ Մարդյանին, ՀՕՄ-ի Կալիֆորնիայի մասնաճյուղի ատենադրապետ Հասմիկ Տերտերյանին, այս հյուրերին: Վերջում կայացավ ՀՕՄ-ի հարավային մասնաճյուղի ձեռարվեստի խմբակի ասների, աշխատանքների աճուրդ վաճառք:

ԱՌԱՔԵԼ ԱԲԵԼՅԱՆ

ԿՐԹՕՏԱԽ

Վանաձորի բժշկական ուսումնարանը 25 տարեկան է

ՎԲՈՒ-ն հիմնադրվել է 1970-ին. սկզբում գործել է որդես Դիլիջանի բժշկական ուսումնարանի մասնաճյուղ, իսկ 70-ից որդես առանձին կրթօջախ. նույն տարին էլ այն տվել է իր առաջին շրջանավարտներ 83 բժիշկ: Անցած 25 տարիների ընթացքում ուսումնարանի շրջանավարտներից 2568-ը բժիշկներ են, 49-ը բուժակներ, 56-ը ատամնատեխնիկներ, 234-ը մանկաբարձուհիներ եւ 30-ը բուժակ լաբորանտներ: Վերջին տարիներին զգալիորեն բարելավվել են ուսումնառության դայմանները: Արդեն երկրորդ տարին է կրթօջախը տնակներից տեղափոխվել է վերանորոգված նոր շենք: Այժմ ուսումնարանի 6 բաժիններում սովորում են 561 ուսանող: Անցած շաբաթ օրն ուսումնարանը նշեց իր ծննդյան 25 ամյակը: Հատկանշես հետաքրքիր է Ուսանողական աշուն-95 փառատոնը, որն արդեն ավանդական է դարձել: Ինչդես տեղեկացանք տնօրեն Պետրոս Բաբայանցից, շինարարական լրացուցիչ աշխատանքներից հետո հետագայում նախատեսվում է ավելի ընդլայնել ուսումնարանի կրթական հնարավորությունները:

Ս. Ա.

digitised by A.R.A.R.@

ՀՈԳՍԵՐ

Ճիշտ գնահատենք իրականությունը

ՅՈՒՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ,
ՀԱՀ ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Միջազգային մրցաշարերում Հայաստանի մարզիկներից առավել հաջողության են հասնում մենամարտային մարզաձևերի ներկայացուցիչները: Մեր ծանրորդները, բռնցքամարտիկները, ազատ եւ հունահռոմեական ոճի ըմբիշները, սամբիստները, մանավանդ վերջին երեք տարեշրջանում նշանակալից բազմաթիվ հաղթանակներ տոնեցին օլիմպիական ու բարի կամքի խաղերում, աշխարհի, Եվրոպայի, ԽՍՀՄ առաջնություններում ու դարակներում:

ԽՍՀՄ փլուզումից հետո էլ նոր ոճակալս մեր երկրի դասվիրակները հաջողությունները դեռ շարունակվում են իներցիայով, որոնք, գավոք, ասենք անաբար սակավանում են: Այդ մասին նույնիսկ աչնանգեռ մասնագետները, իրականությանը հակառակ, սկզբում չեն հավատում էին տալիս: Բայց նահանջն այնքան ցայտուն է դարձել, որ այլեւս անկարելի է բարձրացնել չարտահայտվել: Մտովի վերհիշենք նախորդ 2-3 տարիներին կայացած դասասխանատու քննությունները: Դանցում որոշակի հաջողության են հասել հիմնականում վետերանները, ասել է թե խորհրդային ժամանակների մարզական դպրոցներում կոփված մարզիկները: Գիտենք նաեւ, որ նրանցից շատերն իրենց սոցիալական ծանր դայմանները շտկելու, մարզական ունակությունները լիովին դրսեւորելու հույսով հեռացան հայրենիքից, իսկ տանը մնացած վարդեսները տարի տարի մարզումների համար դայմաններ չունեն: ՀՀ սդորտվարչությունը նվազագույն չափով է ֆինանսավորվում կառավարության կողմից: Նորաստեղծ ֆեդերացիաներն են փորձում շտկել իրավիճակը: Բայց նրանք էլ անհրաժեշտ գումար չունեն: Մեր հավաքականները հիմնականում եւ մեծ դժվարությամբ մրցումների են գործուղվում հովանավորների աջակցությամբ: Այդ կերդ երբեմն նոդատակային աշխատանք չի ծավալվի: Հայտնի է, որ մարզիկը կոփվում, հասունանում է մրցումներում: Այդ առումով ուրախանալու ոչինչ չունի հերթափոխը, որը բավարարվում է սոսկ մեր ներքին սակավաթիվ մրցաշարերին մասնակցելով. հանգամանք, որը չի կարող լիովին նդաստել նրա մրցափորձի հարստացմանը:

Եզրակացությունն: Մեզանում սդորտը լիարժեք ձեւով դեռ է հովանավորի դեսությունը: Միայն այդ դարագայում մեր մարզիկների շուրջտարյա մարզումները հնարավոր կդառնան, միայն այդ կերդ համադասասխան բանակի ուսումնամարզական հավաքներն ու արտերկրյա մրցուդերները կիրականանան եւ մենադայքարային մարզաձեւերի հայկական դդրոցի ներկայացուցիչները Հայաստանի մարզական գլխավոր հրեատին (մյուս մարզաձեւերի դասվիրակները նույնդես) վերջին լիակատար հաջողության կհասնեն դասասխանատու ստուգատեսներում: Հիշենք, որ մեկ տարուց էլ քիչ ժամանակ է մնացել Ատլանտայում կայանալիք օլիմդիական խաղերին, որ ձախողվելը դատիվ չի բերի մեր երկրի մարզական հեղինակությանը: ■

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

700 հազար դրամ նարդիստներին

Նարդիի աշխարհի առաջնությունների կրկնակի մասնակից Համբարձում Սրբոյանը գերազանց ավարտեց իր ելույթները Հայաստանի առաջնություններում, դառնալով միանգամից երկու մրցանակի տեր: Նա առաջին տեղը գրավեց կարճ խաղածեւում եւ երրորդ մրցանակին արժանացավ երկար խաղածեւում: Գավաթի խաղարկության համեմատ մասնակիցների թիվն ավելացել եւ հասել էր 112-ի: Երկար խաղածեւում չեմդիոնի կոչումը նվաճեց Հարություն Մարտիրոսյանը, որը հաղթել էր նաեւ 1991 թ. հանրադետության առաջնությունում: Առաջնության մրցանակային ընդհանուր հիմադրամը կազմում էր 700 հազար դրամ: Նոյեմբերին կայանալու է ընտրական մրցաշար, որի արդյունքներով որոշվելու են այն ուղեգրերի տերերը, որոնք իրավունք են ստանալու 1996 թ հունվարին Սամբուլում մասնակցել Թուրքիայի բաց առաջնությանը: Իսկ գալիք տարվա աորիլին կընթանան աշխարհի առաջնության ընտրական մրցումները, որոնք կանվանեն Մոնտե Կարլոյի մրցաշարի մեր մասնակիցներին: Նարդիի հանրադետական ֆեդերացիայի եւ նրա նախագահ, «Կաթ» արտադրական միավորման գլխավոր տնօրեն Սմբատ Տոնոյանի գործունեությունը նդաստում են այդ գրավիչ խաղի տարածմանը, մրցումների կազմակերդմանը, հայ վարդեսների միջազգային մրցաշարերի մասնակցությանը: ՍԼՍՐՔ

13 թիվը հետաքրքրում է դահուկորդին

ԳՐԻԳՈՐ ԱՌԴԵՍՅԱՆ,
«Լուսանս», Ֆրանսիա

Ամերիկացի դահուկորդ Կիսսի անունը մինչեւ հիմա կապված է առաջացում: Շատերը դնդում են, որ նրա իսկական անունը Ալվա Ժունիոր Կիսս է, իսկ ոմանք էլ ասում են, որ այն դեռ է լինի Անձել Հիսուս Կիսս, ի դատիվ մոմոնական եկեղեցու իր դատկանելության: Բայց այս դահուկորդի համար կարեւոր անվան հետ կապված խնդիրները չեն: Նրա գլխավոր մտահոգությունը այն է, որ բացառիկ դժբախտություններ հետաքրքրում են իրեն մարզական կյանքում: Կիսսը ծնվել է սեպտեմբերի 13-ին, որը բոլորի կողմից ընդունված է որպես սատանայական թիվ: Բայց հենց 13 համարի մարզաշորդիկով է, որ Կիսսը 1991 թ. դեկտեմբերին տոնեց իր առաջին մեծահաղթանակը: Մեկ տարի անց նա նորից 13 համարի մարզահագուստով դասրաստվում էր հարթել աշխարհի գավաթի խաղարկությունում: Ֆրանսիայի Վալդիզ քաղաքում տեղի ունեցած մրցումներում նա առաջինը հասավ վերջնագծին: Բայց երբ մրցումներ գրքերն վերջանում էին, այս 13 համարը կրող դահուկորդի բախտի անվիր շրջվեց դեպի անբախտություն: Մշտբ, բուրը դատեցին մրցույթն, եւ կազմակերդիչները ստիպված եղան ընդհատել մրցումները եւ չդրանցել առաջին արդյունքները: «Անա չկա: Մինչեւ հիմա 13 համարը ինձ բախտ է բերել: Սա մի վոտիկ միջադեպ է, որը հարկավոր է մոռանալ», հայտարարեց Կիսսը: Բայց դահուկորդը չգիտեր, որ դա իր դժբախտությունների շարքի սկիզբն է: 1993 թ. Աղտենում Դաֆլիա տեղի ունեցած մրցումներում նա նույնդես գրավեց առաջին տեղը եւ դարձյալ կազմակերդիչներ նույն կլիմայական դայմաններով որոշեցին ընդհատել մրցումները: Այս անգամ ամերիկացիները բողոք բարձրացրին, դնդելով, որ եվրոդացիներն այս ձեւով ուզում են զրկել ամերիկացի մի դահուկորդի, որ չկարողանա տիրել աշխարհի գավաթին: Բայց սրանով Կիսսի անհաջողությունները վերջ չգտան: Այս տարվա մարտի 5-ին դարձյալ Աղտենում տեղի ունեցած մրցումներում նույնդես Կիսսը հիանալի վայրէջով երկրի առաջին տեղը գրավեց: Բայց 68 մասնակիցներից միայն 31-ն էին կարողացել հասնել վերջնագծին: Մնացածներն ընկել էին ճանապարհներին, կամ դուրս եկել մրցադդից: Եւ մրցումները 2 անգամ ընդհատվել էին ու նորից սկսվել: Ֆրանսիացիների բողոքով կազմակերդիչներն այս անգամ էլ արդյունքներ չհրդարակեցին: Ամերիկացիների գայդդին այլեւս չափազանցման չկար: Նրանք ուզում էին հրաժարվել առաջիկա մրցումներից: Ամերիկացիները համոզված են, որ որոշ հսկաամերիկյան տրանսդորտդրաններ կան եվրոդացիների մոտ: Իսկ Կիսսը մտադիր է վերջ դնել դդտնալ դահուկորդի իր կյանքին: Ավելի հետաքրքիր չէ՞ր լինի փոխել միայն մարզաշորդիկի համարը: ■

ԽՈՇԱՆԿԱՐ

Կասդարովը Շվեյցարիայում

Դրոֆեսիոնալ շախմատիստների ասոցիացիայի վարկածով աշխարհի չեմդիոն Գարրի Կասդարովը Նյու Յորքում տեղի ունեցած Վիշվանաթան Անանդի հետ եզրափակիչ մրցախաղից հետո դեռ ինչդես հարկն է լրիվ շունչ չառնելով ներգրավվեց նոր մրցաշարում: Շվեյցարիայում տեղի ունեցող այդ մրցաշարի առաջին երկու տուրերում Կասդարովը միավորը կիսեց համադասխանաբար Լսոնոնացի գրոսմայստեր Յան Էլվեստի եւ հոլանդացի գրոսմայստեր Յան Թիմանի հետ: Առաջատար դարձավ Ամերիկան ներկայացնող միջազգային գրոսմայստեր Բորիս Գուլկոն, որը վաստակել է 2 միավոր: 1,5 միավոր ունի անգլիացի գրոսմայստեր Նայջել Շորթը:

Բորիս Ելցինը շնորհավորեց ...

Վոլեյբոլի համառուսասանյան ֆեդերացիայի հասցեով հեռագիր սացվեց Ռուսասանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինի անունից, որում մասնավորադես նշվում է. «Ի սրտե շնորհավորում եմ Ռուսասանի վոլեյբոլի-100 ամյա հոբելյանի առթիվ: Շնչած իր դատկառելի տարիքին այդ ամենամաչելի եւ գեղեցիկ մարզաձեւը մնում է հավերժ երիտասարդ, էնդիոնալ եւ գրավիչ: Ցանկանում եմ բոլոր վոլեյբոլիստներին, երկրդագուներին երջանկություն, անսդառ էներգիա եւ լավատեսություն»:

Սուդերմրցաշար Թուրքիայում

«Թուրքալեգու երկրների համագործակցության մերձեցման եւ խորացման նդաստակով այժմ ընթանում է ֆուտբոլային սուդերմրցաշարի նախադատրաստությունը, որը տեղի կունենա Թուրքիայում 1996 թվականին»: Այս մասին հոկտեմբերի 24-ին հաղորդել է Սամբուլի «Յուրրիյեթ» թերթը: «Եվրասիայի գավաթ» անվանումն ստացած մրցաշարին, գրում է թերթը, կմասնակցի ութ թիմ: Կազմկոմիտեի մեջ կմտնեն Թուրքիայի, Ադրբեջանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Կիրգիզիայի, ինչդես նաեւ Տաջիկստանի ներկայացուցիչները (վերջինս դատկանում է դարսկալեգու երկրներին, բայց այն, ինչդես նշում են Անկարայում, մտնում է Միջին Ասիայում Թուրքիայի եղբայրական երկրների կազմի մեջ): Կոմիտեի նախագահ Բուրխան Էնուբեթիրը «Յուրրիյեթի» թղթակցին հայտարարել է, որ «Թուրքիան արտասահմանում իր հեղինակությունը դեսք է բարձրացնի ոչ միայն քաղաքական, այլեւ մարզական ասդարեզում»: ՍԱՐԵՆԴՐԵՍ

ՖՈՒՏԲՈԼ

Եվրոդական երկրների ազգային առաջնություններում

Իտալիա

Աշխարհի ամենաուժեղ ազգային առաջնությունն անկասկած Իտալիայի առաջին դիվիզիոնի մրցաշարն է, որը միշտ էլ ֆուտբոլասերների ուշադրության կենտրոնում է: Գարուն-աշուն սկզբունքով անցկացվող հերթական առաջնությունում տեղի է ունեցել ընդամենը 6 տուր: Չեմդիոնների լիգայի մրցաշարին մասնակցելու իրավունքից զրկված աշխարհի հիրավի ամենահարուստ եւ ամենաուժեղ ակումբը «Միլանը» լուրջ մտադրությունների է սկսել հերթական առաջնությունը: 6-րդ տուրում նրա հանդիդումը «Յուվենտուսի» հետ, որը գերազանց է հանդես գալիս Չեմդիոնների լիգայի մրցաշարում, իսկայական հետաքրքրություն էր առաջացրել: Հաղդդդը դառնում էր միանձնյա առաջատար: Խաղին ներկա էր 82 հազար 798 հանդիսական: Այն 2 մլն 200 հազար դոլարի եկամուտ բերեց, որը ռեկորդ է: Առանց այն էլ անչափ ուժեղ կազմ ունեցող «Միլանն» ընդարձակ մրցաշրջանում համալրվել է այնդիսի աստղերով, ինչդիսիք են Ռոբերտո Բաջջոն եւ Ջորջ Վեան: Նիշտ է, Բաջջոն չմասնակցեց վերոհիշյալ կարեւոր խաղին, սակայն Վեան դարձավ նրա հերոսներից մեկը: Արդեն 6-րդ տուրին «Միլանին» առաջ մղեց Մարկո Սիմոնեն: 14-րդ տուրին հաշիվը կրկնապատկեց Վեահը: Հանդիման ավարտին ընդամենը 9 տուրն էր մնում, երբ Դեյ Պիերոյին հաջողվեց կրճատել հաշվի տարբերությունը:

6-րդ տուր

«Ասալանտա»-«Ինտեր»	1-1
«Պարմա»-«Ուդինեզե»	1-0
«Նապոլի»-«Ֆիորենտինա»	0-2
«Տորինո»-«Ռոմա»	2-2
«Վիչենցա»-«Բարի»	2-0
«Լացիո»-«Պադուա»	2-0
«Պյաչենցա»-«Սամդդորիա»	3-2
«Միլան»-«Յուվենտուս»	2-1
«Կալյարի»-«Կրեմոնեզե»	1-0

Մրցաշարային աղյուսակը
6 տուրից հետո

	Խ	Մ
1. Միլան	6	15
2. Պարմա	6	13
3. Լացիո	6	12
4. Ֆիորենտինա	6	12
5. Յուվենտուս	6	11
6. Նապոլի	6	11
7. Վիչենցա	6	10
8. Ինտեր	6	8
9. Ուդինեզե	6	8
10. Ասալանտա	6	8
11. Կալյարի	6	7
12. Պյաչենցա	6	7
13. Սամդդորիա	6	6
14. Ռոմա	6	6
15. Տորինո	6	6
16. Բարի	6	5
17. Կրեմոնեզե	6	1
18. Պադուա	6	1

Իսդանիա

Այս երկրի առաջնությունում տեղի է ունեցել ութ տուր: Առայժմ անհաջող է հանդես գալիս նախորդ առաջնության հաղթողը Մադրիդի «Ռեալը», որն ընթանում է 11-րդ տեղում:

Մրցաշարային աղյուսակը
8 տուրից հետո

	Խ	Մ
1. Ատլետիկո Մադրիդ	8	22
2. Բարսելոն	8	20
3. Խոդանյոլ	8	19
4. Կոմոդոստել	8	16
5. Վալենսիա	8	14
6. Սոդորտինգ	8	13
7. Բետիս	8	13
8. Ռեալ Սարագոսա	8	13
9. Ատլետիկ Բիլբաո	8	12
10. Տեներիֆե	8	12
11. Ռեալ Մադրիդ	8	11
12. Դեդորտիվո	8	10
13. Ալբասետ	8	10
14. Վալադոլիդ	8	9
15. Ռասինգ	8	8
16. Սերիդա	8	7
17. Ռեալ Սոսյեդադ	8	7
18. Ռեալ Օվյեդո	8	7
19. Սեւիլիա	8	6
20. Սալամանկ	8	5
21. Սելտա Վիգո	8	5
22. Ռայո Վալեկանո	8	4

Գերմանիա

Բունդեսլիգայի հերթական առաջնությունը հաջող է սկսել Գերմանիայի բազմակի չեմդիոն Մյունխենի «Բավարիան», որը ինը տուրից հետո երեք միավորով առաջ է անցել 2-րդ տեղում ընթացող «Դորտմունդից»:

9-րդ տուր

«Բյոլն»-«Լեվերկուզեն»	2-2
«Շալկե-04»-«Կայզերսլաուտ.»	1-1
«Վերդեր»-«Դորտմունդ»	2-2
«Ֆորտունա»-«Ֆրայբուրգ»	0-0
«Բավարիա»-«Բորուսիա»	1-2
«Համբուրգ»-«Մյունխեն-1860»	2-2
«Ֆրանկֆուրտ»-«Սեն Պաուլի»	2-2
«Կարլսրուե»-«Վերդինգեն»	2-0
«Ռոստոկ»-«Շտուտգարտ»	3-3

Մրցաշարային աղյուսակը
9 տուրից հետո

	Խ	Մ
1. Բավարիա	9	21
2. Դորտմունդ	9	18
3. Բորուսիա	9	16
4. Ռոստոկ	9	15
5. Լեվերկուզեն	9	14
6. Վերդեր	9	14
7. Շալկե-04	9	14
8. Շտուտգարտ	9	13
9. Սեն Պաուլի	9	11
10. Կարլսրուե	9	11
11. Ֆորտունա	9	9
12. Ֆրանկֆուրտ	9	9
13. Մյունխեն-1860	9	9
14. Բյոլն	9	8
15. Վերդինգեն	9	8
16. Կայզերսլաուտեռն	9	8
17. Համբուրգ	9	7
18. Ֆրայբուրգ	9	5

Բանվիր վարում է
ՍԱՐԵՆ ԲԱԴՎԱՆԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

Դրեան

Հոկտեմբերի 1-ից եւս մեկ օդային կամուրջ կապեց մայրցամաքները: Տարանցիկ նոր չվերթը ԵՐԵՎԱՆԻՑ Չեզ կտեղափոխի դեպի ՍՈՖԻԱ, իսկ այնտեղից... «Բոինգ 767»-ով... Նյու-Յորք: ՍՈՖԻԱՆ Չեր առջեւ ուղի կբացի դեպի Եվրոպայի ցանկացած երկիր:

Հայաստանի Ազգային Օդանավակայան





Սպասում կրանալիք Չեր հանդիպումը հանգիստ ժամանակ

Տեղեկությունների համար դիմել «Զվարթնոց» օդանավակայան կամ ՀԱՈՒ-ի գործակալներին

Լուսանկար Ս. Սարգսյան

MAGIC SEAL

Ամերիկյան EUGENE ROSS ֆիրման Չեր ուշադրությունն է հրավիրում անվադողերի ծակումը նախազգուշացնող վերացնող միջոց MAGIC SEAL:

MAGIC SEAL-ը բարդ հեղուկային կոմպոզիցիա է պոլիկենգլիկոլի հիման վրա, որի կազմի մեջ մտնում են 19 տեսակի սինթետիկ թելեր:

MAGIC SEAL-ը լցվում է փականի միջով դողի ներսը եւ թույլ է տալիս վերացնել կամերայով եւ առանց կամերային անվադողերի ծակվածքի հաշված վայրկյանների ընթացքում:

Ավտոմեքենայի ընթացքի ժամանակ ճնշման եւ կենտրոնախույս ուժի ազդմամբ օրգանական թելերը լցնում են ծակվածքը, չեն կողնում այն: Այդ պատճառով որակը աստիճանաբար աճում է այնպիսին, ինչպիսին կլիներ վուլկանիզացիայի ժամանակ եւ կամերով դողի դեպքում կամերը չի կողնում դողին: MAGIC SEAL-ն ունի որակի սերտիֆիկատ, տրված Ռուսաստանի ոլեստանդարտի եւ դողերի արդյունաբերության գիտահետազոտական ինստիտուտի կողմից:

A STYLE

Երեւան, Նոր Նորքի 1 զանգված, Նանսենի 13 (թիվ 15 մտակայքի տանը, «Շինանյութ» խանութից 200 մ ներքեւ)
Հեռախոս՝ 63-76-45

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ

Որակյալ կոշկակարներ եւ երեսամաս կարողներ:
Հեռախոսներ՝ 533235, 228392

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հայերեն տառերով «ՌՈԲՈՏՐՈՆ» մեխանիկական նոր գրամեքենա:
Հեռ.՝ 22-57-74

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

Հայաստանում հանձնիների զարգացման ծրագիր իրականացնող՝ Փրկեմ է ռեխաներին մասնավոր կամավոր կազմակերպությանը, հանրապետության երգանեներում ստեղծվող ենթադրասենյակներում աշխատելու համար անհրաժեշտ են հետեւյալ աշխատողները. ծրագրի ղեկավար. 2 տեղ, այս պաշտոնը պատասխանատու պաշտոնների մեկն է, պահանջում է բարձր մասնագիտական հմտություն եւ փորձ: Անհրաժեշտ կրթություն. բարձրագույն, ցանկալի է հասարակական գիտությունների գծով, տարիքը՝ 25-ից բարձր. աշխատանքային փորձ. գրասենյակ եւ անձնակազմ ղեկավարելու առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ. աշխատանքը պահանջում է. զարգացման ծրագրերը վերլուծելու ունակություն, ծրագրերի նախագծման, իրականացման, ստուգման, ֆինանսների, անձնակազմի եւ գրասենյակի կառավարման, զեկույցների պատրաստման կարողություն. անձնական հատկություններ. ղեկավարի ջիղ, դատողություն, համբերատարություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու եւ գործելու ընդունակություն. լեզուների տիրապետում. պահանջվում է անգլերեն, հայերեն եւ ռուսերեն լեզուների գերազանց իմացություն. համակարգչային գրագիտությունը նախընտրելի է: Հաշվապահ, 1 տեղ, բարձրագույն տնտեսագիտական կամ մաթեմատիկական կրթություն. տարիքը՝ 25-ից բարձր: Աշխատանքային փորձ. առնվազն 2 տարվա հաշվապահական փորձ: Աշխատանքի բովանդակությունն է ֆինանսական զեկուցագրերի պատրաստումը, հաշվետվության վարույթը, բյուջեի պլանավորումն ու ղեկավարումը եւ ծախսերի վերահսկումն ու վճարումը: Անհրաժեշտ հատկություններ՝ ճշտապահություն, վերլուծական հմտություն, ազնվություն, անկեղծություն, կատարողականություն: Լեզուների տիրապետում. պահանջվում է անգլերեն, հայերեն եւ ռուսերեն լեզուների գերազանց տիրապետում: Համակարգչի տիրապետումը պարտադիր է: Այն թեկնածուները, որոնց տվյալները համապատասխանում են վերը նշված պահանջներին, ներկայացնեն իրենց դիմումներն անգլերեն լեզվով, մինչեւ հոկտեմբերի 26-ը. 1995 թ. Դիմումում պետք է նշված լինի այն պաշտոնը, որին հավակնում են: Հարցազրույցի համար ընտրված թեկնածուների ցուցակը պատրաստ կլինի 1995 թ. հոկտեմբերի 27-ին: Դիմումները ներկայացնել հետեւյալ հասցեով. Երեւան, Մաշտոց 50 ա, բնակարան 13. Փրկեմ երեխաներին կազմակերպություն: Հեռախոսներ՝ 52 84 12, 58 27 01, 58 12 07

ARX TOURS & TRAVEL

ԱՅԱՔՍ ՖԻՐՄԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՀԱՃԵԼԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ

7 ՕՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ
- ԿՏԵՍՆԵՔ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԴԵԼԻՆ
- ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՀՅՈՒՐԱՆՈՑ
- ԷԿԶՈՏԻԿ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ
- ՇԱՀԱՎԵՏ ԱՌԵՎՏՈՒՐ
- ՆՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

ԱՅԱՔՍ-ը Չեզ պատրաստել է հաճելի անակնկալ
Ֆանտաստիկ ցածր գներ

Նոր ավիաչվերթ նոյեմբերի 5-ից ԱՄԵՆ ԿԻՐԱԿԻ
ԵՐԵՎԱՆ - ԱՆԱՊԱ
ուղեվորների անվճար տեղափոխում օդանավակայան
ԵՐԵՎԱՆ ՊՈՒՇԿԻՆԻ փ. 43ա հեռ. 530 - 551, 524 - 564

«ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

ՀԵՌՈՒՏԱԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25.10.1995 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ
18.00 Կասակերգություն «ԽԵՎԵՐԻ ԱՍԱՆՈՐ»
19.30 Անկածային տեսաֆիլմ «ՍԻՐՈՒ ԱՌՅՈՒՇԸ»
21.00 Տեսաֆիլմ «ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ԱՇՔԵՐՈՎ»
22.30 Տեսաֆիլմ «ԿՈՍՍ ՍՈՆՏԵ ՔՐԻՍՏՈ»
01.30 Տեսաֆիլմ «ՄԵԿ ՏԱՆԳՈ»
03.00 Ծրագրի ավարտ

26.10.1995 ՀԻՆԳՇԱԲԹԻ
18.00 Կասակերգություն «ՍՍՏԱՆԻ ԳՈՒՏԸ»
19.30 Տեսաֆիլմ «ԳՈՂ ԼԵՍԻՏԵՐԸ»
21.00 Վիստերն. «ՄՂԵՐԻԿ»
23.15 Տիկներ. «ՀԱՆՈՒՆ ԱՐՈՂՈՒԹՅԱՆ»
01.00 Տեսաֆիլմ «ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆԵՐԸ»
03.00 Ծրագրի ավարտ

Խնբագրությունը ընդունում է գովազդներ եւ հայտարարություններ:
Հանգամանել 446939, 443413

A STYLE

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

60-100 օրական հավի ճտեր

Հեռախոսներ
Երեւանում
(374-2) 234073
Էջմիածնում
(8-259) 5.86.98
(8-259) 4.19.76

A STYLE

«Պայքարյան» հասարակաքաղաքական տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 1960 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության՝ 24. 10. 1995 Գինը 10 դրամ

digitised by A.R.A.R.@